

ԴԻՑԵԲԵԿԱԽԹԻԵՆ

ԳԻՐՏԸ ԴՐՈՒՅՆԿԱՐ

292

Բ - 18


աբար

ՀԱՅԱԳՅԱ Է 1987 թ.

ՄԵՍՐՈՎԴԻ ԴԱՏԹԵԱՆ ԹԱՂԴԱԴԵԱՆՑ

Սարկաւագ Արբոյ Էջմիածնի.

ԿՈւռք հեթանոսաց դեքեն. Ա-մ. չէ օ:



ՏՊԻԳՐԵԱՆ ԴՐԱՅՐԱԳՐԱՆ

ԵՊԻՍԿՈՊՈՍԻԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ

ԿԱԼԿԱԹԱՅ

Դ ՊՐԻ ՅԱԿՈՎՐԱՅ ԱԿԱԿԻԵԱՆ Տպագրէ :

1830.

166

ՊԱՅՉԱՐԱՓԱՏԼ ԱՍՊԵՏԻ

ՍԱՐԳՍԻ ՑՈՀԱՆՆԻՍԵԱՆ ՍԱՐԳՍԵԱՆՑ

ՄՏԵՐԻՄ ՄԻՐՈՑ ՆՈՒԷՐ

---

Թռէպէտև ոչ արժանի ձեզ Կու-  
էր, Պայծառափայլ Մտերիմ, Հա-  
մարիցի երկդուղնաքեայ իմոցս քըր-  
տանց, սակայն անշուշտ Հաւատամ  
զի անկեղծուն և մշտնջենաւորուն  
ճշմարիտ սիրոյդ, Հայելով յաւէտ  
ի սիրտ քան ՚ի տուրս պատարագաց՝  
ընկալնու զայս առաջին պտուղ ի-  
մնւմս Նղիենակութեան իբրև զծա-

Դիկ բուրաստանի մշակելոյ սիրով  
իւրով ի հոտ հաճութեան կամացն  
իւրոց : Որպէս զի աշխատութիւն իմ  
բարեհամբաւ անուամբ ձերով , և  
անուն ձեր յաշխատութե սիրեցե-  
լոյդ առ հասարակ պայծառասցին :

Երախտապարտ

Պայծառափայլ

Ասպետութեան ձերոյ

Մ . Դ . Թաղեադինոյ :

## ՅԱՌԱՋԱՆ

Գիտութիւն Դիցաբանութեան, թէև առ ՚ի  
չգոյէ Քերթողաց յազգի մերում խոտան գտաւ  
առ ՚ի մէնք, սակայն այնքան ապաց ընծայեցաւ  
յաշ լուսաւոր ազգացն Եւրոպայի, մինչ զի գրել  
զսա ոչ միայն իբրև նախաշաւիլ դպրոցական դա-  
սառութեանց, այլև դայեակ վերծանութեան նախ-  
նի Խրթնութեց, բացարան առասպելեալ հնուեց,  
լուսարան պատմութեանց, Քերթողութեանց և  
գրուածոց. և սկզբնադարան ուստի ստեղծաբանք  
զերեակայականն, և պատկերահանք զընդօրինաց  
կանան հանեալ զառարկայս գեղերեսեն ուրոյն  
նոքօք զարուեսոս իւրեանց ։ Ա ասն այսորիկ և  
ես՝ որ յանձին կալայ իմովսանն նպաստել աղ-  
ջային գրագիտութեան, ձեռն արկի և ՚ի շարա-  
յարութիւն կրկին հատորոց դիցաբանութեան ՚ի  
բարբառ մեր զշնդկացւոցն ասեմ, և զԵւրոպա-

ցւոցն առհասարակ։ Այլ քանզի հնարին չեթ հայ  
լսելեաց հաւանիլ անծանօթ իրթնաբանութեանց,  
առասպելեալ ածաբանութեան Մերկիմաստակացն  
հնդկաց, առանց ճշդիւ համեմատութեան դից  
սոցա ը դիս հնոյն Յունաստանի, վասն որոյ ար-  
ժան դատեցայ նպիս զայս հատոր համառօտել նոցա  
ի վերծանութիւն, զի յերեւիլ մեծահատոր հնդկաց-  
ւոյն նալաստեալ ի սմանէ հասկանայցեն զգըեալսն,  
և շահիցին անձանց զհնութիւնս յաւիտեանց։

Ո՞չ շատ ասացից ։ Արբեցի որքան և կարեռ  
եղեւ զիմ գըուած յանպարկեշտ բառից և 'ի բա-  
նից, որ յարարս դից. զի անարժան համարեցայ բա-  
նալ թերահաս մտաց՝ զոր ինչ միանգամ կատա-  
րելութիւն հասպեկին շառնէր անվտանգս լսելեաց։  
Դիմարձ երկանցս համարեալ զօդուտն հասա-  
րակաց, Ֆնամ հնասիրաց Աղջի մերում

Խ. Ծառայ

ՀԵՂ. ԻՆԱԿ.

## ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ:

### ՆԵՐԱԾՈՒՄՆ.

Հարց. ԶԻՆՉ<sup>0</sup> է Դիցաբանութիւն :

Պ. Դիցաբանութիւն հանու՞՞նշանակէ զբացատ-  
ըութիւն ու ելքէ առասպելեալ աւանդութեանց. իսկ  
մասնաւոր՝ զպատմութիւն Դից և Դիցազանց :

Հ. Ուստի<sup>0</sup> ծագի իմեզ դիցաբանութիւնդ անուն :

Պ. Ի դից, որ է համառօտումն յոյն ծայրիս Թεօս.  
Կուսական, լուսական, և ՚ի բանէ, որ է աս, կամ խօն :

Հ. Զինչ<sup>0</sup> էր պատճառ կուապաշտելոյ մարդկան :

Պ. Նախ՝ բնական և ընդաբոյս ցանկութիւն նոցա  
առ գիտութիւն աստուծոյ և կուրութիւն, որ առ  
՚ի չգոյէ ճշմարիտ աստուածապաշտութեան՝ մը-  
ղեաց զնոսա արարածապաշտութիւնիւն: Երկրորդ խոր-  
ամանկութիւն քըմաց և օրէնսդրաց, կեղծիք Քեր-  
թողաց և անհնարին տգիտութիւն առաջին ժողովր-  
դեան : Սատութու գաեալ կրետացւոց զարձան լիւա

նի իւրեանց՝ Արամազդ Ողիմպոսի համարեցան զնա.  
և զՄինոս զօրինադիր իւրեանց որդիացուցին նմա :  
Երորդ՝ զարմանք ընդ գեղլուսաւորացն երկնից, ընդ  
շրջան մոլորակաց. և շափմունս ամաց: Յորուստ  
գրեթե մեծ մասն Եգիպտական և յոյն դիցամոլուն  
ծագեաց, ւաբէական պաշտօն յԱրաբիա, խորհ-  
ուրդ Միջրայ առ Պարս և Հայս, բնապաշտութիւն  
ազգաց, և շոսցն այն ժամանակագրութիւն Ճենաց  
և Հնդկաց, որ բիւր բիւրաւոր ամօք յառաջ տանի  
զարարչութիւն քան զոր է: Չորորդ՝ անսանձ ցան-  
կութիւն մարդկան առ անմահութիւն, որով հրա-  
պուրեցան յանդրիս պարծանաց մշանցենաւորել յի-  
շատակս իւրեանց. և զմահացուն յանմահութիւնի  
գրեալ աստուածական վերտառութ դրուասեցին:

**Հ. Ավառաջին կռապաշտեաց :**

Պ. 'Ի կարծիս նախնի Հեղինակաց մերոց՝ Աերուք.  
այլ ինձ յաւէտ հաւանի՝ Նինոս արքայ բաբելոնի:

**Հ. Երբ, ուր, կամզիալորդ :**

Պ. Յետ նուաճելոյ զազգս բազումս յաւուք  
միում'ի վերջին ամի կենացն Նոյի, յորժամ բաբե-  
լայիք հաւաքեալ էին 'ի Նինոս քաղաք՝ յանդրի  
հանեալ զհայր իւր զբէլ ընդ աստուծոյ երկրագել  
հրամայեաց նմա ժողովրդեանն. զչարագործն ապաս-  
տանեալ յարձան անդը՝ անպատուհաս դատեցաւ,

որով և գերքան զմարդ համբաւեալ զնա՝ միուանեաց Արամադդ բաբելոնի. և սորա խաւար կռապաշտութեան զտիեզերս ընդ իւրե կալեալ կուրացոց :

**Հ.** Ամնայն ազինք պաշտեցին՝ զբէլ :

**Պ.** Ոչ Յ. Ա. Եթա այսպէս սկզբնաւորելոյն՝ իւրաքանչիւր ազգ ստեղծ իւր աստուածս. օրինակ իմն, Ավրեկեցիք պաշտեցին զերեին, Պարսիկք և Հայք զՀռւր, զՎուր, զՀողմունս և զԼուսմւորս. Լիբէացիք զԱրեգակն և զԼուսին. Թէբէացիք զոշնար և զաքիս : Մեմփայիք զկէտն Ովան. Մարք զայծ. Թեսալք զԱրագիլ. Փիւնիկք զԱղաւնիս. Ծապագք զԾառս. Եգիպտացիք զԿոկորդիլոս, զԸսւն, այս և զբանըսրու պարտիզաց :

**Հ.** Հայք պաշտեցին՝ զբէլ :

**Պ.** Ոչ Քանզի Հայկ ոչ հնազանդել կամելով ըելայեկն տամբ իւրով ի Հայաստան, և ՚ի գրգռիլ նորապատերազմաւ ընդ դէմ Հայկայ սպան զնա Հայկ :

**Հ.** Գուցէ յետոյ լելով Հայկսյ թէ Նընոս աստուածացոյց զբէլ պաշտեաց զնա և ինքն :

**Պ.** Զիանդ հաւատալի այս մինչ Մինիթար և մեծն Վարդան միաբան աւանդեն զնմանէ, թէ միայն չկամելով Հայկայ պաշտել զպնատկեր բելայ ապատամբեաց ինմանէ և կենախուզ եղե նմա :

**Հ.** Ունիս զայլ փաստու:

Պ. Այս, քանզի յետ չուելոյ Հայկայ ՚ի Բարելովնէ ՚ի Հայս. ոչ միայն դեռ կենդանի էր Նոյ այս բազում ամօք գինի երկարեցաւ ՚ի կեանս ցըազաւորել Նինոսի. որ ոչ անձամբ կուապաշտէր, և ոչ զայլ ՚ի Նոյն թոյլ տայր։ Ասկա ցորչափ կենդանի էր Նոյ շկուապաշտեաց Հայաստան։

Հ. Ուրեմն ՚ի Ծագաւորութեան Նինոսի։

Պ. Ոչ Զի Զայկ որ լսող եղեւ Նոյի, և որպէս հաւանիմ, Ծաղող և վերջին օրհնութեան ժառանգ ոչ այսքան փոյթ ստորէր զինքն ՚ի պաշտօն նորազոր ինքն սպան, ոչ ապստամբէր յայնմանէ. զոր աշխարհ աստուած դաւանէր, ոչ իշխէր պատերազմաւ, և այն սակաւաւորօք զգէմունիլ պայ. և ոչ իսկ յոյակնկալութեան պահէր մահացուն՝ զաստուած անմահ կորուսանել։

Հ. Զիարդ ու բեմն Ծուի քեզ մնուանիլ Հայկայ։

Պ. Իբրև Ճշմարիտ աստուածապաշտ, և իբրև նախալիկայ հաւամոցն որ առ Աստուած Արարից։

Հ. Ընդէր ապա Խորենացին ՚ի դնել բանս ՚ի բերան Հայկայ՝ ցցուցանէ զնշան հաւատոյ կամ յուսոյ ՚ի նա, այլ միայն ՚ի զօրութիւնս մատանց յոխորտացուցանէ զնա լնող դէմ քաջին առաջնոյ։

Պ. Ընդ այդ ոչ է քեզ զարմանալ. վասն զի Խորենացին չունելով աղջային վիսկագիր, ուստի և դսրու

մեծ դնելով՝ ի վարս Սնիմագունէր թագառարացն մէրսց  
առաջնաց՝ առնու զբովանդակ վարս Հայկայ ՚ի Մարի-  
քասայ կատինայ՝ որ ՚ի բազմավէսն Սղէքսպնդրէ  
քաղեալած ՚ի հայս ։ Որոց գոլով կռապաշա՝ կռապ-  
աշտօրէն և ձեացուցանէին զբանս իւրեանց, որպէս  
առնեն և Սդամայ, և Նոյի, և Մովիսի, և այլոց ։

Հ. Յաջորդք Հայկայ յետ նորա պաշտեցին զբէլ ։  
Պ. Ոչ վասնզի եղեալ սահման թէ կռապաշտել  
յառաջ գայը ՚ի չողոմելոյ ստորագունից առ վեհս՝  
ասեմ զի ոչ Սրամանեակ և ոչ յաջորդք իւր ցՍրամ  
(զորմէ թէ և խորհէր Նինոս վրէժս պահանջել այլ ոչ  
կարէր, ) հնալանդեցսն բարելացւոց, զի առ որսա-  
ւոյ զհաճոյս նոցա պաշտիցեն զդիս նոցին ։

Հ. Ապա երբ կռապաշտեաց աշխարհ մեր ։

Պ. Տարերապաշտութիւն, և պաշտօն լուսաւո-  
րաց թուի ինձ մուտ առնել ՚ի հայս առ կարդոսի  
Սրայեան, որ և Սրայ Սրայեան լսի. զի յայնժամ  
Զրադաշտ մոգ վանեալ զՃամիրամ և զկարդոս  
կորուսեալ մոյծ ՚ի հայս ընդ բռնակալութեան  
և զտարրապաշտութիւն ։

Հ. Ո՞ տայ քեզ կարծել այսպէս ։

Պ. Ընդ այլոց բազմաց, Մահիթի Սնուշաւանայ  
նահապետին մըցոյ՝ որ Սօսոնու-էրն կոչեցաւ . զի նախ-  
նի Հայք պաշտէին և զսօսի ծառ, և նուիրէին նմա

զարիւն քաջազանց “Սօսայ հս-իրէնին, և իւնդունի անդ չշհէնին.” ասէ մերս Մագիստրոս :

Հ. Երբ ապա և մարդապաշտութիւնն :

Պ. Փոքու իմն յետ Եղիական պատերազմին, ուր սկսաւ ազգ մեր առաւել քան զառաւելն խառնիլ ընդ օտար ազգս և ուսանիլ զգործս չարապաշտութեան նոյնին . որպէս հաւաստեն քեզ անցք աստուածացուցման Վահագնի ՚ի Վիրս և ՚ի Հայս :

Հ. Զինչ տայ քեզ թուել թէ Վահագնի նախ բագին կանգնեալ երկրպագին Հայք և Վիրք :

Պ. Համբաւ ամենայաղթ քաջութեանն Արիլ լեայ, որ ընդ այն ժամանակս տարածեալ յաշնարհ ամենայն քաղէր զարմանս ռամկին : Իսկ հայոց և Վրաց տեսեալ զմեր Վահագն յաղթանդամութք և ուժովնմին հաւասար՝ աստուածացուցեալ պաշտեցին զնա՝ նախ ԹմԴՂիւցազանց :

Հ. Ովկէր Վահագն :

Պ. Որդի Տիգիանայ հայկազունւոյ, աստուած զգութեան և ուժոյ համարեալ առ նախնիս Հայոց և Վրաց կամլաւ եւս՝ Հերքիւլէս Հայոց :

Հ. Զինչ են բանք հնոց զնմանէ :

Պ. Գոհութիւն երախտեաց Քերթողահօր մերոյ որ հասոյց առ մեզ հատուած բանիս՝ որ ասէ. “Երինէր երին և երիր, երինէր և Շիրանի Շուլ. երին ՚ի

ծավան ս-նէր պնորմրին եղիքնին, ընդ եղեգոն իսկ չուն եւ-  
տնիէր, ընդ եղեգոն իսկ բաց եւսնէր. և 'ի բացոյն պապոնին  
վշպէր = Նա հս-ը Հեր ս-նէր, առաջ բաց ս-նէր պօրուսն, և  
աշխատն. էին Ս.ը եգոիսնե+ :

### Հ. Մեկնես ինձ զբան երգոյդ:

Պ. Երկունք երկնի և երկրի նշանակեն զահեղ սա-  
սանմունս պատերազմաց : Կարմիրկ եղեգն է վող  
պատերազմին, ծուխ և բոց շնչեալ անտուստ են գր-  
գիռք և իրախոյսք պատերազմաց : 'Ի բոցոյն, այս-  
ինքն ի գրգռելոյ մարտին պատանիկ վաղթը այսէ,  
Ս.րիուն շարժէր : Նա հուը հեր ունէր, զի արիուն  
բորբոքի իբրև զհուը, և հուը նշան է անսարտելի  
զօրութեան : Ս.չկոյքն արեգակունք. և արդարք  
պարտ է արւոյն ամենահայեաց աչս ունիլ, և զամե-  
նեսին ջեռուցանել յուսով յաղթութեան :

### Հ. Զինչ այլ պատմին զամանէ :

Պ. Թէ պատերազմեալ ընդ վիշապաց՝ յաղթեաց  
նոցա, որ է ասել թէ նուածեաց՝ զազգն Մարաց  
զսերեալն յԱշխահակայ որ 'ի մեզ վիշապ թարգմա-  
նի : Եւ թէ գողացեալ զարդն Բարշամայ Ս.սորես-  
տանեայց տարաւ յերկինս, ուր 'ի թօթափուածոյ  
անտի յարդիցն կացին ասեն Հետ+ յարդգողի :

### Հ. Զիարդ նկարի Վ.ահագն :

Պ. Սկայ քաջալանջ 'ի ծունք իջեալունելով. զթի-

կամբ զմորթ առիւծու, և ՚ի ձեռին իւրում լսախտ համանման Հերքիւլեայ, որպէս երե ՚ի վահագն անոկանեալ համաստեղութեան՝ որ բաղկանայ ՚ի 64 աստեղաց, և կայ առընթեր վիշապին :

Հ. Ոյք ՚ինքն քուրմք Վահագնի :

Պ. Վահունիք, Նախարարութիւն մեծ ՚ի հայս սերեալ ՚ի Վահագնէ դիւցազանց :

Հ. Զինչ կիշէին պաշտամունք Վահագնի :

Պ. Վահեվանեան պաշտօն, տաճար, կուռք, քուրմք, և այլն. յորոց հռչակաւոր էր կառուցեալն ՚ի Տարոն, և յԱշտելատ աւանի :

Հ. Չաստուածացուցին ՚ի հայք և զայլս ՚ի քաջաց :

Պ. Ս.յ. զի յետ միանգամ արմատանալոյ չարութեան՝ ոստս բազումն արձակէ : Եւ հնարին չէր թէ յետ պնմահանալոյն Վահագնի նախնիք նորին ՚ի մահացուս համարէին : Վասն այսորիկ Հայկ թէև աստուածապաշտութեամբ կեցեալ և մեռեալ, սակայն զեռ կան նշմարանք յետնոց յաստուածութիւն վերացուցանելոյ զնա :

Հ. Եւ զինչ վաստ առ այս :

Պ. Նախ՝ բանք սուրբ գրոց. յոր. լը, 31. Եսայ, ժդ, 10. ուրանօր զյոյն բնագիրն Օօεօն. ՚ի մերն գրի Հայկ, որ է համաստեղութիւն ինչ բաղկացեալ ՚ի 63 աստեղաց, զետեղեալ առընթեր ցլուն ՚ի ձեւ վա-

հանազէն սկսյի, զի սովոր են կռապաշտք աստեղաբնակս ունիլզդիս :

### Հ. Զինչ այլ:

Պ. Բազումք՝ ի Հեղինակաց մերոց, ընդ ոքս և երեխին Անանիա Շերակունի՝ բաց՝ ի ծանուցեալ որդւոյն Հայկայ՝ տայ նմա այլ ևս ուստերս վեց և դստերս՝ վեց համանունս նախնի Ամսոց մերոց : Ուր այլք ընդ հակառակն՝ տան նմա երկոտասան որդիս ըստ անուանց ամսոց, և զքսան և չորս դստերս ըստ անուանց ժամուց աւուրս մերոյ. որ է երկրորդ նշան աստուածացուցման նորա :

### Հ. Զ՞. ի դից ուրեմն համարիս զՀայկ :

Պ. Ըստ երկուց փաստիցդ միանգամայն՝ համարիմ ես զՀայկ Զըռուան Հայոց և աստուած ժամանակի. վասն զի հայըն լինիլ Արամազդայ, այսինքն Արամաստուծոյ, սկսյ քաջազէն, աղմկարար, և խռովայոյզ, նաև հայրանալ Ամսոց երկոտասանից, և ժամուց քսան և չորից, են՝ Տշմարիտ յատկութիւնք ժամանակի :

### Հ. Չաստուածացուցին՝ Հայք զԱրամ:

Պ. Այս. և վասն աննահանջելի քաջութեան իւրոյ եղին զնա գլուխ հանուր դից իւրեանց, և Արամազդ կոչեցին. որ է համառօտումն բարդութեանս՝ Արամ Աստված: Բայց զի չունիմք առձեռն

զմն հենական պատմութիւն Ս.ղգիս՝ շատ լիցի հանել  
գընթերցուս մեր յԱրամազդ յունաստանի :

**Հ.** Ոչ և զԱրայն մեր գեղեցիկ :

**Պ.** Այս, և զնա օլինադիր կռապաշտութեան և  
ասլուած իմաստութեան համարեցան :

**Հ.** Չինչ անցք են սորա :

**Պ.** Շամփրամ վարվար՝ կին Նինոսի, որ և Աստ-  
ղիկ Ս.սորեստանեայց, պատգամախօս եղեւ Արայի  
ամուսնանալ ընդ իւր, եւ տիրել Բ.աբելովիս :

**Հ.** Արար Արայ գբան նորա :

**Պ.** Ոչ զի իմաստութիւն ոչ հեշտանայ ՚ի գրկանս  
փափկութեան, եւ ոչ կրօն ՚ի բաբելովիս :

**Հ.** Չինչ զհետ եկին այսր արհամարհանաց :

**Պ.** Շամփրամ, որ և Հեշտութիւն պատերազմեալ  
սպան զԱրայ. և զինչ զարմանք այսմ. մինչ և զար-  
դիս իսկ հեշտութիւնք մարդկան ունայնութեան  
տուեալ զժամանակն՝ դրեթէ անհետ առնեն, զի-  
մաստութիւն Ս.ստուծոյ՝ եւ զիառս բնութեան :

**Հ.** Չինչ դիպաւ Արայի յետ մահուն իւրոյ:

**Պ.** Էջ ՚ի ստորինս անդնդոց, և ուսեալ անդ զծա-  
ծուկսյաւիտեանց՝ լիզելով դիցն կենդանացաւ վե-  
րստին և ուսոյց մարդկան դիցապաշտ լինիլ:

**Հ.** Մեկնեան ինձ զառասպեդ :

**Պ.** Այս է, զի իմաստութիւն քննէ զիսորս աստ-

ուծոյ, և լիզելով յարուցանել զնա դից՝ ակնաբեկ  
ածային իմն գոլ՝ քան եթէ մարդկային :

Հ. Ապա զեվ ի դիցն Ծուիս զԱրայ :

Պ. ԶԱՐԱՅՆ համարիմես Միջըստ, Խաղողոն, կամ  
Արե հայոց : Պ զի գեղեցիկ քան զնա շիք ինչ յա-  
րարածս : Բ զի օրըստօրէ Ծաղի և յառնէ : Գ զի բա-  
նայ լունով զամենայն գաղտնիս գաղեալ յաղիս խա-  
ւարի, և ջերմուք իւրով տայ կեանմ մարմնոց, որ է  
ջերմեռանդուի կրօնիցն, զոր ասի Ծէ ուսոյց Արայ :

Հ. Դիցուք Ծէ սոքա այսպէս . զինչ ասել ունիս  
ապա և վասն Յունաց և Հռովմայեցւոցն իմաստնոց :

Պ. Յոյնք և Հռովմք առաւել յիմարեցան յայսմ  
քան զամենայն ազինս երերի. զի աստուածացուցին  
ոչ միայն զգազանս և զմտածին կեղծիս, այլեւ  
զմարդասպանս, զգողս, զբողս, և զայլ այտպիսի  
ժանտախտս մարդկան :

Հ. Քանի՞ կամ ո՞րպիսի կուռս պաշտէին սոքա :

Հ. Ոչ միայն զորս ստեղծ երեակնյութիւն և հը-  
պարտութիւն, այլև զորս գերեաց զէն իւրեանց .  
մինչ առ ապայս տեսեալ Ծէ ոչ բաւէր նոցա հռովմ,  
առաքեցին, որպէս և զհատուածս ժողովրեան՝ ի  
գաղթականս իւրեանց :

Հ. Զկալծեն՞ ոմանք Ծէ սուբբ զիւն իցէ պատ-  
ճառ բազմաց առասպելացս այսոցիկ :

Պ. Այս գի իսրայէլ բնակելով, յեգիապոս չորեք Հարիւր ամ, օրինակ եղեւ քրմաց նոցա բաղում ինչ առնուլ ի գրոց և 'ի ծերոց, և խառնել յիւրեանց դիցաբանութիւն. ուստի և յունաց կռապաշտութիւն ել: Զի կիկրոպս յեգիապացւոց, և կադմոս 'ի փիւնիկեցւոց մեծանալով առ նոսա՝ ընդ բազմաց ուսուցին նոցա և կռապաշտել. որում այնքան հաւան գոտան Յոյնք՝ մինչ յետոյ յաստուած հանեալ և զմարդիկ, պաշտեցին:

Հ. Զինչ զհետ եկին այսօր մնութիապաշտութց:

Պ. Յետին նուաստափառութիւն ուամկին, անհընարին յիմարութիւն, և անքաւելի մեղք:

Հ. Զինչ շահ մեզ ուսումն դիցաբանութեան:

Պ. Շահ սորա է բարւոք հասկանալ մեզ ոչ մեռ այն շդրուածս հնախօս պատմաբանից, և քերթողաց այլոց ազգաց, այլնաև զմեր իսկ նախնեաց գըրեանս, որք յաճախ ակնարկեն յառասպելով դից:

Հ. Եմ ՀԱՅՔ, Յոյնք, հռովմք և այլք ընկալան զկեղծիս իբրև հիմունս կրօնից իւրեանց:

Պ. Զի տեսին զնոսա յարմար 'ի շողոմել զսին հաճոյս մարդկան և շարժել զնոսա յառս մեծամեծս և երևելիս:

Հ. Զիարք եկաց կռապաշտութիւն առ 'ի չգոյէ դիտութեան ճշմարտին Աստուծոյ:

Պ. Զի կռապաշտք չունելով զտեսակ ամճնուրեք զօրութեանն այ, ստեղծին ի մտաց աստուածս մասանց աշխարհի, կամ զկատարելութիւնս նորա անձնաւորեցին ի պէսպէս դէմն: Եւ այսպէս զամենամեծ բարութիւնն այ՝ Ա.Յ. Բարձր անուանեցին, զամենակատար իմաստութիւն՝ Ա.Յ. Ենու, և զամենակալ Զօրութիւնն Հերո: Որով և զանեղծն փոխեալ ի նմանութիւն պատկերի եղջանելոյ՝ պաշտեցին յամենայն ուրեք:

Հ. 'Ի քանի՞ դասս որոշեցան կուռք Հոյոց:

Պ. Վ. Ճիտ տեսութիւն ինզրոյս չէ մարթ որոշակի աւանդել վասն պակասութեան առ մեօք մեհենական պատմութեանց: Սակայն մերձասահման գոլով նոցա Յունաց և Պարսից ըստ նոցա և տրոհեցին, թուի ինձ. յերիս դասակարգութիւնս, յերինոյին, 'Ի Ծառվային, և 'Ի Սոներովմէդոյին:

Հ. Որք են կուռք առաջին դասու:

Պ. Օ Մարամազդ, Հերա, Հռէա, Վանեստա, Նանէ, Մարեխ, Աստղիկ, Անահիտ, Պոսիդոն, Ապողոն, Հերմէս, Հեփեստէս և Դիմետը: Յորս յարին նաև Վ.թհ, Կրոնին, Սանդարապետ, Պերսիփոնէս և Սալանդարամետ:

Հ. Որք են կուռք միջին դասու:

Պ. Կարի բազմաթիւ են Դիք այսը դասու, այլ

անուանք՝ գլխաւորացն են Պան, Յանոս, Իօնս  
Պղուտոս, Հիմէն, Մոմոս, Քուն, Մորփես, Հար-  
պոկատ, Արշալոյս, Աերտումնոս, Փլորա, Պոմոնա,  
Ճակատագիրք, Բաղր, Հիգէա, Հիբէ, Կատալիք,  
և այլք :

Հ. Որք ապա և վերջին դասու :

Պ. Դերադիք, Կիսադիք, կամ Կիսաստուածք  
որ են քաջք յանմահութիւն ճագատագրեալ : Եւ  
դուխ ամինոցա՝ Ա.ահազն, Խսկիւլտալիոս, Յասոն,  
Թեսիս, Պերսես, Ոդիսեւս, և այլք :

Հ Կան և այլ կուռք բաց 'ի սոցունց :

Պ. Ա.յ՛ : Յաւէրժահարսունք, Քաջք, Պայք,  
Պարիկք, Ա.արդապայք, Ա.րծայրք, Հոյլք, Բոյլք,  
Ալլաւսունք որ և նայադք, Համբարուք, Տըիառնք,  
Լարք, Համբաւ, և այլ բազում թերափանի :

### ԳԼՈՒԽ Ա.Ռ.Ա.Հ.Ի.Ն.:

Հ. Ո՞վ էր Ա.Ի.Հ.Ն կամ Խաօչ Քէոս :

Պ. Ա.իհ է անարար անդունդն կամ որովայն բը-  
նուե, ուր առաջ քան զարարշութիւնն դնիւը այն  
խառնիխուռն և անկերպարան սփիւռ նիւթոյն, յոր-  
մէ ձուլան տիեզերք : Զոր անձնաւորեալ քերթո-  
ղաց՝ յանդիման կացուցանեն երիցագոյն ածոց :

Հ. Զտան Ահին ծնունդս :

Պ. Այս, զԵրկիք, զԽաւար, և զԳիշեր :

Հ. Որ ՚իդից ծնան ՚ի սոցանէ :

Պ. Երկը դասեր Ահին ծնաւ որդի Երկին,  
Օսրոնոց Ռւռանոս, որ ամուսնացեալ ընդ մօր իւ-  
րում ծնաւ զՏիտան, զՉըռուան, և զՌվեկիան : Յորոց  
Տիտան մալստամեեաց լնդ դէմ հօրն :

Հ. Խաւար և Գիշեր չամուսնացան՝ լնդ միմեանս :

Պ. Այս, յորոց ծնան Օդ և Օր, եղեն Գիշերոյ այլ  
ևս որդիք բաղումք, որգոն, Ճակատագիրք, Երե-  
կորնականք, Մոմոս, Կատաղիք, և այլք :



### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ :

Հ. ՈՎ էք Կրօնօս Կրաք, Saturn, Սուպեռնի,  
Չըռուան, Երեւակ, Կամ Ճամանակ :

Պ. Որդի Երկը և Երկի Երբայր Կիկղոսաց, ՈՎ-  
կիանոսի, Տիտանայ, ևս և հարիւրաձեռն Սկայից :  
Պաշտիւր ՚ի նախնեաց իբրեւ ած ժամանակի, և ան-  
ուանէք Աստուածահայր, Կամ Դիցահայր :

Հ. Զինը անցք են սորա :

Պ. Աս խարհը թով Երկը մօրն իւրոյ եւ քերց Եկաց  
իշխան աշխարհի, դաշն եղեալ լնդ Տիտանայ եղօք

իւրոյ ապստամբելոյ ընդ դէմ հօրն մի բնաւ ապբեցուցանել զարու զաւակունս իւր :

Հ. Կրոնին սրահեաց զիւր դաշն :

Պ. Ա. Յ., զի կլանէր զամարուս իսկոյն ՚ի ծնանին նոցա այլ կիւբեղ կամ հռէա կին նորա նենգ գործեալ առնն՝ ապբեցոյց զորդիս իւր զԱրամազդ, զՊոսիդոն, եւ զՍանդարապետն Պղուտոն :

Հ. Զինչ հետեւեցան դժրողութեանս :

Պ. Լուեալ Տիտանոյ զքեկումն դաշին ընկէց յաթուոյ զկրոնին, եւ կնաւն կիւբեղեաւ հանդերձ կապեաց զնա ՚ի դժոխս. մինչեւ Սրամազդայ ՚ի Շիկունս հասեալ նմա՝ զհօր անդրէն նորոգեաց զաթոռ եւ զիշանութիւն :

Հ. Հասկացաւ կրոնին որդւոյ իւրոյ զբարեբարութ:

Պ. Ու. այլ ընդ հակառակն նախանձեալ յաջողութեանն՝ դաւ գործեաց նմա. զոր իմացեալ Սրամազդայ՝ արտաքսեաց զնայերկնից. իսկ նր ասւասաւնեալ ՚ի Յանոս արքայ Լատինացւոց՝ վախեաւ մազապուր :

Հ. Յանոս հրավէս ընկալաւ զնա :

Պ. Պատուով եւ մեծարանօք. զոր եւ կարգեաց աթոռակից եշանութե իւրոյ: Իսկ կրոնին ՚ի տըրիտուր այսր երախտեաց նր ուսոյզ հաւատակաց նր զմակութիւն եւ զաշատական արուեստս, կա-


աելով՝ ի մի զամնեսին ոսկի շղթայիւք, այս է տուր  
եւ առութ դրամոց. զի ասի թէ նախ սա հնարեաց  
զազնձափողս, որոյ ՚ի մի կողմն նկարիւր նաւ, ըստ  
որում նաւու եկն անդ կրովն. եւ ՚ի միւսումն ըա-  
նոս երկդիմեան։ Եւ այնպիսի խաղաղասէք մոօք եւ  
արդարութ կառավարեսց զժողովուրդմն, մինչ ար-  
քայութեան նորա կոչիւ Ոսկի դար։ \*

Հ. Զինչ պատմաբանական իմաստք կեղծոյս։

Պ. Թէ կրովն էր Նոյ։ ա զի հինք հեթանոսաց

\* Հայ+բաժանեցին զ.յ. «մասնին ՚ի +առևտի դարս Ա. ու-  
զին դար ՚ի սոհս արդարաւելուան, անմեղսւելուան և լիւ-լեռն  
բնաւելուան առ սոհսուապի պայն լինելոյ մարդիւն և պարզ. կով-  
աց Դար սոհեղն։ Երբերդն ՚ի սոհս լեւելոյ, մարդիւն ՚ի  
լորն իսյս, իսցելոյ Երինից պահոնց իւր շաղօնու նոյս, և  
երիրի հաւազսւելուան ՚ի բերաց, իսլցաւ Դար արծունի։  
Երբերդն ՚ի սոհս լորուսր ցանյու-է մարդիւն, իսլցաւ Դար  
պղնյի։ Իսի լորերդն Դար Երինի. Շի լեին լորի+ ընդ սր  
և անեցաներ սոհր։ Ա. յս +առևտի բաժանման+ դարսց նոյ-  
նանոն գրեւել առ ամենոյն ապօն հջոց, և յանեպ առ Ճենա  
և առ Հնդին, պարս ՚ի Հնդին Դիցուբանաւելու մըրսմ։

Ա. յս առաստղեւ ծագեւ լեսի ինչ ՚ի լորեւնիւ-լեռն արյա-  
նէն զար եփես Նոբա-Գուդնասոր շաբ Դասնիւն։ Ուսոյ Գլո-  
ւուն սոհի ցաւցանէ լորբույսւելիւն երաշնի և զիւպւասւելիւն  
Քաշտէաց-սց։ Ա. էջ+ և լեւ+ արծունի+ պար արծունին,  
իսմ զնագ Պարսից։ Բարբ+ պղնյի+ Ա. Մամեդունոց-սցն ընդ  
Ա. զնէւսունդըւն մէջուն, պար պղնյին։ Իսի որսներն երի-  
նի+ պարն երիալահուսուն, և զւուզմէւնիւն ավխորհակալու-  
նիւն, սր ՚ի սոհր Ծանեաւ, պարգունոյր և իւսոյր։



ասեն առ նովաւ իմանալ անասնոց զիսօսս մարդկան  
այսէ, թէ մի էր բարբառ ամենեցուն: Բ որպէս Նոյ  
Եսք երիրի լսի առ Երբոյեցիս, կամ Համի. սոյնպէս կը-  
ովս այր կիւբեղայ, այսինքն երիրի: Գ Նոյ այգէգուն,  
կըովս՝ երիրագուն: Դ Նոյ՝ զբամանէծ վասն զմերո-  
կունի հօրն բանտալոյ, եւ կըովս օրէնս եղ պարձեւ զըր:  
Տէրէ պէտի գիւղանիցէն: Է Նոյ գուշակեաց զջրհեղեղն,  
կըս չն՝ զառագումնիւն ոնչընաց, զւնիւ գոտպանին, յարում  
և զարդիւն, զանուանոց և զառնաց նուսիւ խուսն ի միունն: Զ  
կըովս զիւր ծնունդս կլանէր. Նոյ՝ զաշարհակու-  
հեղեղ ծննդոց մարդկան գուշակեաց: Է Նոյ իւրովն  
զերծաւ ՚ի ջուրց, կըովս եւ կիւբեղ եւ որք ընդ  
նոսա՝ ծնան ՚ի ծովէ: Եւ որպէս կըովսի զերծան  
Արամազդ, Պոսիդոն եւ Պլուտոն, սոյնպէս Նոյի  
Սեմ, Քամ, Ցաբեթ:

**Հ.** Զինը եւ իմաստասիրական հաւաստիք:

Պ. Կըովսի կլանել զիւր ծնունդս եւ փսխել վեր-  
աին նշանակէ զծախել Ժամանակին զթմեւ նորոգել՝  
կամ, զի Աւուրք, Ամք եւ Ամիսք որդիք ժամա-  
կին միշտ կլանին եւ ծնանին ՚ի նմանէ:

**Հ.** Ո՞րպէս նկարիւր կըովս:

Պ. Ծերունի մշտնջենահասակ եւ Ծեւաւոր, յաջ  
ունելով զերանդի եւ զօձ գալարեալ ՚ի նշան ամաց  
եւ յաւիտենականութե: Դսկ ՚ի ձախոյ մանուկ մեր:

՚ի կլանել։ Երբեմն նաև ՚ի մէջ երկուց զուազթառոյդ պատանեաց եւ պատանուհեաց, նշանակելով թէ Տարին Եղանակօք բողըի։

**Հ. Զինչ և վասն ԿԻՒԲԵՂԱՅ :**

Պ. Կիւբեղ դուստր Երկնի և Ծովու, կին Կրոկնի, ոք և Հոկա, Ոպս, Դինդիմէնէ, Բերիկինթիա, Պասիթիա, Դիցամայր, Վեստա մեծ, Բարի Դիցուհ, և Իդեան, պաշտէր ՚ի նախնեաց մեծահանդէս նաւակատեօք իբրեւ խնամակալ քաղաքաց և արգասեաց։ Քուրմք սը Գալեան և Կարիբանտեան լսէին։

**Հ. Ո՞րպէս դրօւիւր Կիւբեղ։**

Պ. Դժիսոյ քաջափառ, Ծագ բրդանց. ՚ի գլուխ բազմեալ ՚ի կառ առիւծավար, յաջ ունելով դժաւազան և ՚ի ձախն զբանալի. սիածել պատմուհան խայտաճամուկ. եւ երբեմն համաստեղեալ գրեթէ հոծութեամբ ստեանց յոտից ցգլուխ։

**Հ. Ջեկնեա :**

Պ. Կիւբեղ ըստ որում Երիշ՝ աշտարակօք գըւ խոյն ցուցանէ զլերինս, զբրգունս, եւ զբարձունս։ Բանալեօքն՝ զօրուի բուսոց և հանքաց, յորոց մին յերակս ՚ի ներս և զմիւսն յերեսս ՚ի վեր սփռէ։ Առիւծավար կառօք զբուռն շարժիւն հողագնտոյ. իսկ խայտաճամուկ Գանդերձիւք՝ զերփին երփին երանգս երկրի և զփաղվիւն յարագալար կանաչաց։

ԳԼՈՒԽ ԵՐՈՐԴ

Հ. Ա՞վ Եր ԱՐԱՄԱՆԱԴՐ :

Պ. Արամազդք բազումք էին առ նախնիս, որոց  
անցք ուրիշն կամ գլխին՝ի մին՝ և կամ ածանցին  
որդոյ կրովենի և Կիւբեղայ. որ զերծեալ՝ի ժա-  
նեաց հօրն՝ տուաւ ՚ի ինամս քրմաց Կիւբեղայ :

Հ. Ուր ծնաւ Արամազդ :

Պ. ՚Ի լերին Դդայ ՚ի Կրետէ. և մնաւ կաթամբ  
այծուն Ամալթեայ, զոր յետոյ Փոխեաց ինքն՝ի  
համաստեղութիւնն Այծուն։ Զեղջիւր սորա՝ Մա-  
թեղջիւր ասացեալ ետ ցթաւէրժահարսունա, որով  
ամինչ անաշխատ նոցա առատանայը :

Հ. Զինչ քաջութիւնս արար Արամազդ :

Պ. Պատերազմեալ ընդ Տիտանայ՝ զերովն զհայր  
իւր ՚ի բռնակալութենէ նր ազատեաց . այլ յապե-  
րախտել հօրն և զնա մերժեալ բաժանեաց զւշարի  
ընդ եղբարս իւր։ Զերկին և զերկերյինքն գրաւելով  
զծով Պոսիդոնի տայ և զսանդաբամետս Պղուտոնի :

Հ. Վարեաց սա անվդով զիւր իշխանութե :

Պ. Ոչ զի Տիտանք մաստադիրք կուտեալ լերին  
՚ի վերայ լերանց՝ փորձէին դղորդել զերկինս, այլ  
Արամազդ օգնականութեամբ Հորքիւլեայ քաղի  
նըուածեալ եղծ զնոսա :

**Հ. Զինչ այլ հոյակապ արարու :**

Պ. Իբրև լուեալ Արամազդայ զմարիս մարդկան իրանէր յուղզու թիւն նոցա, Լիկայոն փորձել կամելով զնա՝ սպան և հանդերձեաց զմի ՚ի ծառայեց իւրոց կերակուը. ընդ որ ցասուցեալ Արամազդայ հրդեհեաց զարքունիս նր և զնա փոխեց ՚ի գայլ:

**Հ. Արմար Արամազդ և զայլ աստուածավայել գործս բարութեան :**

Պ. Ոչ. այլ ամենահնար խարդաւանուք ջանաց զավացուցանել զանամօթ պագոտուի իւր : Եւ նախ ՚ի կերպարանս Արմար զիւը քոյը զշերա ապականեաց հրապուրելով զնա յամուտնուի : Բ. զԴանէ զդուստը Խկրիսեայ արքային Արդիվաց՝ զփակեալն յաշտարակի աղարտեաց՝ փոխելով զինքն յանյը ունեն. և որ ամուր է արդեօք՝ որ չտայ անցս սիրոյ և ուկւոյ : Գ. Լիդայ՝ զկին արքային Տինտարուե եղծ ՚ի կերպարանս Կորուպոյ : Դ. Անդիոպէ զկին Նիւկոսի արքային Թիբէացւոց առնանդեաց փոխելով զինքն Արշայր : Ե. Աղկմենա զկին Ամփիարիսնի գարշեցոյց՝ առել զկերպարան նորին իսկ Ամփտրիոնի առն նր : Զ. Եղինա զդուստը Եսոպոսի արքային Բիովտիոյ հրդեհեալ սիրով ՚ի կերպարանս Բայր Հրացոցի շարեացն՝ աւար առ զկուսութիւն նր : Է. Փոխեալ զինքն ՚ի Մըջին՝ զկղէտորիս

զկոյսն թեսաղտցի մայրացոյց : Ճ. Ծագտեալ՝ ի կեր-  
պարանս Անունայ՝ Կաղիստոն զդուստը Լիկայոնի  
յշացոյց. զորնչմարեալդիցուհւոյն արտաքսեաց ամօ-  
թով յիւրմէ : Հերա վոխարդրեաց զնա յարջ և  
Աբանաղդ ամբարձ ՚ի համաստեղութիւն Արշան  
մեծի : Ե Գանիւմիդէս զորսորդ քաջագեղ յափշտա-  
կեաց ՚ի կերպարանս Արծույ՝ գինեպաշտ լինիւլ ին-  
քեան : Եւ զԱստերիա զդուստը կէոսի ճանկեաց  
՚իբաց : Ճ. Փոխակերպեալ՝ ի ցուլ Եւրոպա զդուս-  
տը Ազերոնի արքային Փիւնիկեցւոց յափշտակեաց :  
Եւ տես, քանի խառնակերպս Ճիւաղանայ մարդ  
որ միանգամն անսպատկառանայ :

### Հ. Ե՞՞ն սորա և այլանուանք :

Պ. Անթիւք : Կոչի Բէլ, Բահաղ, Բէլֆեգովը, Բե-  
հեղեքըուղ, Ճանճահալած կամսոսկ՝ Ճանճիկ : Եւ-  
բամազդ, Որմիջդ, Ոսիրիս, Դիոս : Ամոն, զի սաղա-  
ւարտ այծեան կըէ ՚ի գլուխ : Զευς, Զիւս՝ զի կեանս  
տայ : Կεօսսուս, Ըանթառաք. Փլմինետոր. Փայ-  
լատակող, Ցով, որ և Յուպատէր Օգնող հայր,  
Նիկոֆօօօս, Յաշնական : Ծնող Հերմոդինէս, Պիւ-  
թեան, Ողիմսլիական, Կապետոլեան : Շատիօ,  
Փրկէլ. Լուկէտիոս Լուսահայր. Դայիխապիտէր Օ-  
րահայր, Տրոֆթալմոս, Եռաշեան. Յօնտաօս,  
Որոտայոլ, Փերետիոս : Վանատուր, Պիստո,

Պրիդիտոր, Կուիրինոս և Եւ Եղիկիոս, զի աղօթք  
արդարոց քարշեն զնա՝ ի խոնարհ. և այլն :

**Հ. Որպէս՝ նկարի Արամազդ :**

Պ. Արքայ մեծափառ բազմալ յաթոռ բարձ-  
րութեան . յաջոյ ունելով շանթս և զփայլատակ-  
մունս, և 'ի ձախոյ զգաւազան Կիպրոսի ՚ի նշան մշ-  
տնթենաւութեան իւրոյ : Ընդ ոտիւք նորա դրօշք  
հսկայ, և առաջոյ արծուի թեասփիօռ : Տօն սորա  
կոչի ՚ի մեզ Արմզդական, և նուիրանի են այծ, ոչ-  
խար, ցուլ սպիտակ, կաղնի ծառ, և այլն : Արա-  
մազդ է նոյն ինքն Կայծակն, կամ Շանթ Երկնից  
ը բնաբանից, և կամ Տարրն հրեղէն :

**ԳԼՈՒԽ ԶՈՐՈՐԴ**

**Հ. ՈՎԿ ԷՐ ՀԵՐԱ, կամ Յունոն:**

Պ. Քոյր և կին Արամազդայ. դժխոյ Երկնից և Երկ-  
րի, որ ծնեալ ը ումանց յԱրքոս, և ը այլոց ՚ի Սա-  
մոս, յանձին Եղեւ խնամակալուե Եղանակաց :

**Հ. Երջանիկ՝ էր ամուսնութիւն սորա լնդ Ել-  
քօրնիւրոյ :**

Պ. Ոչ: անհամար թիւ սիրուհեաց առնն կատա-  
զեցոյց զԴժիոյն ՚ի նախանձ անհնարին, և մղեաց  
վսա պատուհասել զորս սիրէր Արամազդ : Եւ այս-

պէս զԻոն՝ ի կով փոխեաց, և զԱրմելի՝ ի մահ դատապարտեաց :

### Հ. Որպէս :

Պ. Հետամուտ լեալ գնացից առն գիտ զնա՝ ի գրկանս Իոնի. իսկ Սրամազդայ տեսեալ զգալուստ կնոքն՝ զԻոն փոխեաց յերինջ. զոր առեալ Հերայ պահեաց՝ ի դիպահւոց. զԱրդոս զորդի Արիստորայ հարիւրաշեան՝ որոյ՝ ի ննջեւ յիմնից միշտ արթուն կային միւս յիսունքն աշաց՝ սրահապան կազգելովնմա : Հերմէս ներդաշնակաւրուք քնարի ընդուրմացուցեալ զԱրդոս՝ զԻոն, ի սիրամարդ փոխակերպեաց. և Հերա լծեաց զնա՝ ի կառս իւր:

### Հ. Ննան՝ Հերայ զաւակունք :

Պ. Մ.յ՛ : Մարեխ, կամ Մարտ. Հեփեստէս, որ և Վուլկան. Հիբէ, և Եղիթիա կամ Լուսինա :

### Հ. Բարեբարոյ՝ դտաւ Հերա առ սյր իւր :

Պ. Ոչ զի զՀերքիւլէս զորդին Սրամազդայ, / Ս.լի մէայ այնքան՝ դժնդակ դաժանուք հալածէր, մին զայրացեալ առն՝ ոսկի շղթայիւք կախեաց զնա ընդ մէջ երկնից և երկրի : Հեփեստէս ձեռներէց եղեալ յաշատութիւն մօրն՝ գահավիժեաց յերկնից՝ ի Սամոս և խեղ զբարձ իւր :

### Հ. Զինչ արար Հերա :

Պ. Գրգռեաց զԻիս յասլստամբութիւն ընդդէ:

առնն, այլ Արամիսզդ օգնականութ քաջին Արքիվեայ նախրացոյց զամ ջանա նոցա, և աքսորեաց յերկնից զԱպողոն և զՊոսիդոն վասն չարեացս :

**Հ.** Զինչ առանձնաշնորհութք են սորա :

**Պ.** Իրիս, Հիր, Հիրիկ, կամ Ծիածան դուստր թաւմասայ և Էլեկտրիայ օրիորդ քաջագեղ և արագաթե հեծեալ յաղեղն երկնից՝ հրեշտականայր Հերայ, որպէս Հերմէս Արամազդայ : Սովին և եթ տարբերեալ զի Իրիս ոչ ուրեք առաքիւը եթէ ոչ 'ի խռովել զիսաղաղութ :

**Հ.** Կան սորա և այլ անուանք :

**Պ.** Այս. կոչի սա Անթիա կամ Փլորիդա՝ ծաղկեայ : Արգիվեան, կազինդարիս, կապրոտինա, եւ կիւրիս : Իբրև չաստուածուհի Հարսանեաց՝ Ախուգուլս, 'ի կամարէ հարսինս Դոմիդիւկա՝ Տնաբեր տնբեր, Հարսնածու : Զուգէ, լուծ . զի լծէ 'ի մի զամուսինս : Կատարինէ, զի մարդ անամուսին ոչ է կատարեալ : Իբրև հոգաբարձու ծննդեան՝ Եգերիա, զի դիւրածինս առնէ զկանայս : Փլունիա, Օպիզենա Օգնուու, Ծնուցիչ, Մանկածու կամ Մանկաբարձ : Եւս եւ՝ Պարթենոս կամ Կոյս, Դժիոյ, և այլն :

**Հ.** Զիարդ նկարի Հերա :

**Պ.** Դժիոյ լուսերես, կառավարեալ 'ի սիրամարդաց. Ծագ 'ի գլուխ, և գաւաղան ոսկի 'ի ձեռին իւ-

ըռում։ Հերա նշանակէ զՕդ, որում և նաժշտանց  
քաղաքունին Ծիածան կամ Իրիս որ եւ Հիր։

### ԳԼՈՒԽ ՀՏԵԳԵՐՈՐԴ

**Հ.** Ով էր ՊՈՍՏԴՈՆ կամ Նեպտոն։

Պ. Որդի Կրօպէի և Կիւբեղայ, Եղբայր Արամաղ-  
դայ, տէր ծովու և հայր գետոց և աղբեւրաց, որ-  
բաժանիլ անդ Միեղերիս ընկալաւ զտիրապետու-  
թիւն ջրոց. Ար է ծովեղերեայ գաւառաց։

**Հ.** Շատացաւ Պուխոն յիւր բաժին։

Պ. Ոչ. այլ միաբանեաց ընդ դիս յապտամբուի  
ընդ դէմ Արամաղդայ. ուստի ՚ի պարտուի վանեալ  
հարկեցաւ զամ մի ողջին հաւատակել Լէոմիդոնի  
արքային Տրոյիոյ ՚ի լինուած պարսպաց քաղաքին։

**Հ.** Զիփհճեաց Պուխոն ընդ Աթենասայ։

Պ. Այս. վամն անուանակոչութեան քաղաքամօր  
Ատտիկիոյ այնքան սաստիկս հակառակեցան, մինչ  
հանել նոցա զիրսն յստեան դիցն համօրէն։

**Հ.** Զինչ վճռեցին դիք։

Պ. Թէէ ով յերկոցունց անտի Հոթհել կարիցէ  
մարդկան մեծ իմն աշարգե, նմա տաշին իրաւունք  
անուանադրուե քաղաքին։ Պուխոն հերձեալ զեր-

կիր եռաժանեաւն արտադրեաց զծի՝ զորօինակ սպա  
տերաշմին. իսկ Աթենաս զծիթենին՝ զօրինակ խա  
ղաղութեան. ուստի և արժան դատեցաւ՝ ի դեց  
պատույն այնորիկ :

**Հ. Ամուսնացաւ՝ Պոսիդոն :**

Պ. Այս. Էառ սա կանայս երկու զԱմփիտրիտէ  
զդուսմը ԲԱԿԻԱՆՈՍԻ և զԹԵՄԻՍ, այլ նման Արա-  
մազդայ ԼՈՅՃ և սա զօրէնս ամուսնուն. և ՚ի բազ-  
մութենէ սեղեխաց ծնաւ զբազումս որդւոց : Ո-  
րոց երևելիք էին՝ Տրիտոն, Փորկոս, Պրոտէոս, Պո-  
ջիփեմոս, Բեղերովիոն, և Անկէոս Արգոնաւորդ :

**Հ. Որպիսի՝ ոք էր ՏՐԻՏՈՆ Պոսիդոնի որդին :**

Պ. Կիսովն ՚ի վեր՝ մարդ, և կիսովն ՚ի վայր՝ ձուկն.  
Երկոքին ոտք նորա հաւասարին չորից սմբակաց  
ձիոյ, տուտն կեռ է զօրէն կիսաբոլորակ լուսնի.  
և ինքն է ընկեր միանգամայն և փողահար հզօր՝  
Պոսիդոնի հօր իւրում:

**Հ. Որպիսի՝ ոք էր Փորկոս ո՞րդին Պոսիդոնի ՚ի  
Թեսիդեայ յաւերժահարսէն :**

Պ. ՓՈՐԿՈՍ հեղձուցեալ յԱտղասայ ՚ի ծով՝  
համարեցաւ ընդ դիս ջուրց : Երեքին դստերք  
ոորա ասին ունիլ զմի միայն ակն, և զնոյն հա-  
սարակաց ՚ի կիր առնուլ առ ՚ի պէտս տեսուն :  
Զի իբրև կամէր ՚ի նոցսնէ ոք աեւանել զիմն՝

զետեղէր զակն 'ի ճակատի իբրև զքար 'ի մատանող. և ասլա յետ տեսանելոյն՝ հանէր և տայրքերց իւրոց, և այսպէս։ Սոքա հասարակօրէն Գորգոնայք լսին. և մասնաւորապէս՝ Մեղիւսա, Եւրիալէ, և Սթենոն։ Բնակէին սոքա մերձ 'ի սահմանս Երեկորնական Պարտիզի, յեզը կիսադնտոյ երկրիս. սլղնձանիւթ ձեռոք և օձախորիւ գիսովք որոց այնչափ տպեղ էին դէմք և դժնեայ հայեցուածք, մինչ քարացուցանել զտեսողն իւրեանց։

Հ. Զի՞նը Էի՞ն գործք Գորգոնաց։

Պ. Ապականեալ եղծել զբովանդակ մերձակայսահմանս բնակութեան իւրեանց, և շարաշար անգիտութեամբ թիւնաւորել, թմրեցուցանել և քարացուցանել զանցորդս ճանապարհաց։

Հ. Ո՞վ սպան զնոսա։

Պ. Պերսես օգնականութեամբն Սթենասայ ըստապան զԴորգոնս, և գլխով Մեղիւսեայ, զոր կըէր ընթիւր՝ քարացուցանէր զորս և կամեր։ Բայց զարմանամ, թէ զի՞արդ և ինքն Պերսես չքարացաւ 'ի նմանէ։

Հ. Պահեաց Պերսես զգլուխ Մեղիւսայ։

Պ. Ո՞ւ այլ ընծայեաց պաշտպանին իւրում Սթենասայ, և նա յեռեալ 'ի վահանի զմարդիկ 'ի քարինս փոխէր նովաւ։

Հ. Զինչ և վասն ՊՐՈՏԵՌՈՍԻ որդւոյ Դասիզոնի և  
Փիմակայ Յաւերժահարսին :

Պ. Աս համարիւր շած ծովու, գուշակէր զա-  
պագոյից, և փոխէր զինքն յոր կերտարան և կամէր :

Հ. Արձակ՝ գուշակէր :

Պ. Ոչ. զի ոչ միայն սրաթռիչ արագութեամբ  
իւրով աններեւ յաշաց լինէր, այլ և բիւրազան կերպա-  
րանավոխութեամբն անծան մնայր յամենեցունց :  
Ուստի Արեօսիոս որդին Ապողոնի, որ 'ի պատ-  
ճառս մահուն Եւրիդիկեայ կնոջն Որվեայ կորոյս  
զամ մեղուս մախանօք վրէժինդիր յաւերժահար-  
սանց, ոչ կարաց ընդունիլ զիսրատ վերածնուցա-  
նելոյ զնոսա՝ մինչ ոչ կապեաց զծերունին Պլո-  
տիոս 'ի կրկին կապանս :

Հ. Տաս ինձ հաւաստիս առասպելիդ :

Պ. Այս : Դիոդորոս Սիկիլացի և այլք ասեն  
զնա լինիլ իմաստուն արքայ ոնն Եգիպտուի ա-  
շալուրը, լայնախոքհուրդ, երկարատես, և ճարտար  
Ար այնզի ագսնէր աղզի ազդի զարդս կենդա-  
նակերպս և արծուէդրօշ՝ Քերթողք աշլաքանեցին  
զնմանէ թէ կերպարանսիս լինէր :

Հ. Ո՞րքան ոք էր ՊՈՂԻՒՓԵ ՄՈՍ :

Պ. Հըշ մեականի որ կեայր աւազակութեամբ  
և արենհեղութեամբ ըստ կակայ և կերուլեայ : Աս

ՊՈՂԵՄԿԱ ԸՆԿԵՐՈԳՆ ԿԱՂԵԱԼ ՎԱԿԵՐԱց յայր իւր, և  
հետ զհետէ գիշատեալ լափէր զնոսա: ԱՅԼ  
Ողիսսեայ գինեհարեալ զնա և խարուկեալ զակն  
նորա՝ զերծաւ անմվաս :

. Հ. Զինչ և վասն ԲԵՂԵՐՈՒԹՈՒՏՈՒՑ:

Պ. Նախկին անուն սորա էր ՀՏՊՊՈՆՈՍ. զի  
նախ սա ուսոյց սանձել զերիվարս: Ապա զբեղե  
քոս զարքայ կորինթոսի խուզեալ 'ի կենաց՝ կո  
չեցաւ ԲԵՂԵՐՈՒԹՈՒՑ: Կայ յարքունիս Պրետոսի, ընդ  
Ստենոբեայ վասն շնութեան չարախօսեալ ա  
ռաքի առ Յորատ արքայ Լիկիոյ գրով կորստեան  
անձին, այլ բազում արութիւն քաջութեան ցու  
ցեալ 'ի պէսպէս պատերազմունս՝ կալնու զՊԵԳԱԽՈ  
ՃԵՌԱՏՈՒԹԵԱՄՔ ՊՐՈՍԻԴՈՆԻ, և հեծեալ 'ի նա ըս  
պանէ զՔԻՄԵՌԱՅՆ ԵՂՋԵՐՈւաքաղ: Ճիգ եղեալ յեր  
կինս գնալ ցնդի 'ի խելաց, անկանի 'ի վայր, և ժ  
նորա փոխադրի յաստեղունս :

. Հ. Ունիս՝ ասելինչ վերատին զՊՈՍԻԴՈՆԷ:

Պ. ԱՅ. ՄԵՏՐՈՒՑ ՄԵՍՏՐՈՒՑ դստեր ԵՐԵՔ  
տիոնի առ 'ի սխուր շնուեն տայ զօրութիւն ո  
միայն կերպարանափոխութեան, այլ նաև զընա  
փոխութեան իսկ. որով մերթ 'ի կով շըշէր զինքն  
մերթ 'ի թռչուն, և մերթ 'ի մատկուկ, ևն :

. Ե. Պ. ՊՐՈՍԻԴՈՆ և այլոց զդոյն զօրութիւն:

Պ. Ա. Յն, ԿԵՆԵՑ.Ց օրիորդի Թեսաղացւոյ է  
վարձ կուսութեանն՝ շնորհեաց զօրութիւն փոխե-  
լս զսերս իւր՝ որովիգին յարու եկեալ անուանե-  
ցաւ կինէոս, որ ընդ ԿԵՆՍաւրաց մարտուցեալ  
թալեցաւ կենդաւոյն:

Հ. Զիարդ սովորաբար նկարիւր ՆԵՄՎՈՒՆ:

Պ. ՆԱԺԵԿԱԼ ի կառս խեցեղէնս վարեալս ՚ի դւ-  
քնաց կամ ՚ի ծովաձիոց, ՚ի գլուխ ռւնելով թագ  
լուսացնձուղ, և ՚ի ձեռին զեռաժան. շուրջ սկա-  
տեալ Տրօտոնօք և Համբարուօք:

Հ. Են և այլ աստուածք ծովու:

Պ. Ա. Յն, ՈՎԿԻՑ.ՆՈՍ որդին Երկնից և Երկրի  
Համարիւր հայր ոչ միայն գետոց, այլ և կենդա-  
նեաց և աստուծոց միանգամայն որ ՚ի նոռա:

Սա ՚ի Թիֆեայ ծնանի որդիս Երեք հազար թուով.  
և գլուխ ամի նոցա Ներսես ՚ի Դորեայ կնոքէ իւրմէ:  
Որոյ դատերք յիսուն կոշին յանուն հօր իւրեանց  
Ներեղեանիք, կամ Ներսեան հարառնիք:

Հ. Դիք ծովու շասին արդեօք ՊԱԿԻՄՈՍ  
և ԻՈՆ մայր նորա:

Պ. Ա. Յն. Ա. Ծամաս այր Իոնի ցնդեալ ՚ի խելաց.  
պատառէ զորդի իւր զՂերքոս: Իոն Երկուցեալ  
՚ի դիպաց ասակ ՄԵՂԻԿԵՐՄԱՆ որդովն հանդերձ

ընկենու զինքն՝ ի ծով։ Աւստի ինքն Լեռտիա, և  
որդի իւր Պաղէնս անուանեցան։

Դ. Բայց նախ քան զթողուլ քո զգաւառ քը-  
րոյդ, կարես ասել ինձ թէ ով իցեն ՍՏԻՐԷՆՔ։

Պ. Այս Կոյսք, Համբարուք կամ Սիւրէնք կի-  
երեքին առասպելեալ կենդանիքն՝ որ կիսովն ի վեր  
նմանէին կուսի, և կիսովն ի խոնարհ ձկան։ Ան-  
ուանք նոցա՝ Պարթենոպէ, Ղիգիա, և Լեկոսիա։

Հ. Աշխանօր բնակէին։

Պ. 'Տ նեղուցին մեսինայ ընդ մէջ Սիկէլիոյ և  
Նէտպուլեայ. և ներդաշնակաւոր երգովք զմայլեցու-  
ցեալ և ուշաթափեալ զնաւորդն՝ ի վերայ հասա-  
նէին և գիշատէին զնոսա։ Այլ Արփես իւրոք  
քնարաւ յաղթեալ նոցա՝ քարացոյց։

### ԳԼՈՒԽ ՎԵՃԵՐՈՐԴԻ :

Հ. Ակ էր ՍԱՆԴԱՐԾԱՊԵՏՆ, կամ պղուտոն։

Պ. Արդի Կըովնի և Կիւրեղայ, եղբայր Արա-  
մազդայ և միահեծան դժոխոց։ Ար ի բաժանիլ անդ  
թագաւորութեան աշխարհի ընկալաւ ի վիճակ  
իւր զանդարամետ անդընդոց և զպետութիւն ի  
վերայ անդատեալ հոգւոց։ Զի նախ սա եզիտ ա-  
սեն, զծէս յուղարկաւորուք թաղելոյ զմեռեալ։

Հ. Ամսնէր եր՝ Պղուտոն կովի սաւ :

Պ. Պլաստուց, ըստ յունաց, և Dis ըստ Լատինաց-  
ւոց է Հարաստութիւն : Ս.թէ զի ՚ի խորին խորշոց երկրի  
եւ անձնանք հարաստութեց, և զի ըստ Կիկերոնի ամ-  
գրութիւն երկրի մասն սորուն ակնարկուն, վասնորոց  
իրաւամբ կոչի \* Պղուտոն սա հարուստ :

Հ. Ե՞ն նև այլ անուանք սորս :

Պ. Ըստ Ածեց, Ըստէս որևէ խաւարային Աշելատօչ՝  
Ըգելաւս, Ընծիծաղ զի ՚ի դժոխու չէ ծիծաղ : Փեր-  
քիւսու, Քաւարար : Արկոս, Ովքագոս, մերթ ևս Կը-  
ռայէտոս՝ Հանգուցիւ . զի մահ զմարդ հանգուցանէ :  
Նւ մերթ Սումմանոս՝ Վեհագոյն, և Ստիգման, Սան-  
դարամետական, կամ Երորդ Ն.րամագդ :

Հ. Կարես ստորագրել ինձ զարքայութիւն Արկոսի :

Պ. Ըստ . Ընդ նեղ առապար իջեալ ՚ի ստորինա-  
ռեսանեա զախարհ խաւարային լի ազգի ազգի թշ-

\* Պաշտամ որդի Յասնի և Դիմետրի զոր Բազունի չէ ս-  
տիւ չու Պաշտամի Սանտորոսութիւն, առեր շառառութեալ Հորո-  
սութեանց : Զամ իսրայելաց թէրելուզոց ինչնենին ինչու  
՚ի գոյն առ մէզ . որ է առել ինչ յամը սպանին հարստութիւննեա.  
ոյլ ՚ի գնուն ինչ առեւ ինչ զէր անձնարին որդութիւն . յասց-  
անելով ինչ առնի որդու որդու յանդին ՚ի մէնջ ճախութիւննեա  
ոյլու սրբաբանութիւն յասցած գիրիս որինքնեա հորդիւն : Ա.թէ  
ինչ առ ուն ունենաց չէ, առնոյն և այնպէս որյան բանա-  
կարաց զանազարհ իշխութեան : Առ առ Ա.սրիս Առմենան ոյլ  
ոյլ նայու սուին շնուից և դորի մասնիւնուն :

ուառութեամբ և տանջանք : ՚Ի մուտք դրան  
սորա դարանի Հոգ , Տրտմութիւն , Դալկահար  
հիւանդութիւն , Ծեռութիւն , Մահ , և մահեղբայր  
քուն , Գաղանի , Դաւանք , յայտնի Զրկանք , Բամ-  
բասանք , Վըէժ , Կատաղիք , և այլ խառնուվնդոր  
Ճիւաղանի :

Հ. Զիարդ՝ ամուսնացաւ Արքայն դժոխոց :

Պ. Որովեժեւ ՚ի սակս դաժանութեան բարուցն  
եւ խաւարային աղջամղջին որ պատէր զհամօրէն  
սահմանօք տէրութեան նորա՝ ոչ ոք յաստուածու-  
հեացն հաւան գատաւ հարսնանալ նմին , հարկեցաւ  
Պղուտոն յափշտակուք գտանել իւր կին :

Հ. Յափշտակութեամբ՝ որպէս :

Պ. Այնինչ Պերսիփոնէ դուստր Դիմետրի ըն-  
յաւերժահարսունա եղեալ բոլորէր ծաղկունս ՚  
դաշտին Եննեայ ՚ի Սիկիլիա , յարձակեալ Պղուտոնի  
կալաւ զնա . եւ տարեալ ՚ի սանդարամնուս ամուս-  
նացաւ ընդ նմա :

Հ. Որպէս՝ նկարի Պերսիփոնէ :

Պ. Սովորաբար ՚ի ձախմէ Պղուտոնի բազմեւ  
յաթոռ սանդարամնտից , առ պատուանդանի որոյ  
դանդաղէ կերբեր : Կատաղիք դժոխոց շուըջ կա-  
զնովաւ , Հարպայք թեւատարած խոյանան զբլ-  
խով նորա , պաշտեն զնա Ճակատագիրք , և Հրեշ-

անդիդոց և Սկայք զարհութելիք սպաս տանին Դիցուհւոյն :

Հ. Զինչ է Աօքօօց, կամ Ավերնոս :

Պ. Լիճ կիզանողական տարածեալընդ միջավայրը դժոխոց . ուստի գանգըանան՝ ի վեր այն մահաբեշ գարըութեցն գոլորշիք՝ որ Ծիւնեալ նաև զժուտնա երկնից սահեն՝ ի վայր անկենդան :

Հ. Են և այլ Գետք դժոխոց :

Պ. ԱԽԵՐՈՒՆ որդի Դիմեարի ծնեալ յայրի ուրեք անհայր՝ ի մօրէ ոչ տանէր լուսոոյ . վասն որոյ վիժեալ՝ ի դժոխու. փոխեցաւ՝ ի գետ դառնանութե՛ : ԱՏԻԳՈ գարշահոտ հեղեղ մահառիթ ատելութեան դուստր Ովկիանոսի և մայր դիցն Յաղթութեան : Որոյ՝ ի կողմն եկեալ Արամազդայ՝ ի պատերազմին ընդ Տիտանօ ընկալաւ մօր իւրում զայս առանձնահնորհութի, զի գից երդնուլ յանուն նը՝ մի անցյի . և թէ երգմազանց ոք՝ ի դիցն գտցի, զրկեսցի ոչ միայն՝ ի նեկտարինաց՝ այլ և յածապատիւն վերտառութեց ամմի և ամիսս ինն : ԿՈՐԿԻԴԻՏ ընկալեալ զանուն յողբոց անտի որ մեծակական լոին՝ ի վը հոսանացն աղիտից : ՓՂԵԳՈՆ, որոյ ալիք, հըեղէնք և վտակ բոց բորբոքել : Լիթ, և որ միանգամըմպէ՝ ի նմանէ՝ անդէն և անդ՝ ՚ի մոռացօնս արկանէ զարմ : Հոգիք մեռելոց անցեալ ընդ այս գետորայ՝ հանէին յար-

քունիս Պղուտոնի . որոյ դռնապան էր ԿԵՐԲԵՐ  
շուն եռագութիս, ծին Երիդնեայ 'ի Տիւփոնէ :

Հ. Զիարդ՝ անցանէին ընդ այս հոգիք մեռելոց :

Պ. ՔԵՐՈՆ որ և Պորթմիւս չած ոմն արհօրա-  
դէմ, խոռուամօրուս և հրաշեան, նաւավար դժոխոց  
կարդացեալ առնու զոգիս թաղել մեռելոց և տանի  
զնոսայ Եղիսեան կայան . ուր հոգիք անթաղեց առ մի հարիւր  
ամ : Վարձ չածոյն յայս պաշտօն՝ է վող մի :

Հ. ՈՒՔ էին ԿԱՏԱԼԻՔ :

Պ. Երեքին մահանուէր Դատերք Ախերոնի և  
Գիշերոյ : Հասարակաց անուանք նոցա Երենիք  
Դիբիք, Եւմինեդք, և կանիք : Այլ յատուկին  
Ալեկտոն, Տիսիփոն, և Մեգերայ կամ Լիոսոն : Առ-  
քա համարէին 'ի պաշտօնեայս դիցն Վըէժինողուե,  
ուստի և գիսախոխ, դաժանահայեաց և սոսկայ  
դիմօք երևէին միշտ : Դործ սոցա է կտտելւ խայ-  
թել զիսիղ յանցաւորաց թէ աստ և թէ 'ի դժոխու

Հ. Զորակիսի պատիժս ածեն սոքա 'ի վր :

Պ. Յաստիս՝ ժանատախտ, մահտարաժամ, սլաքե-  
րազմունս, խոռվութիւնս, սուր, դառն խայթ խղճի,  
աղէտս և թշուառութիւնս : Դսկ յանտիս՝ հան-  
պազորդեան հարուածմ գանից և ընթարանաց :

Հ. Ու պէս նկարէին կատալիք :

Պ. Սովորաբար դժմեայ և զարհութելի դիմօք, խաւարային և դժոխահոտ զգեստուք. գիսականի հերաց նոցա էին գալարք օձից և սողնոց Ծունաւորաց, և ինքեանք խաթազան կարճաց ՚ի միռմ, և ջահ վառեալ ՚ի միռսումն կալեալ ձեռին՝ ալընդէին զհետ խղճահարելոց :

### Հ. ԳԻՒԼ. ՀԱՅՈՒԹ. Ք. :

Պ. Հարաբայք, որ և Հաւադեք, էին ցուցանքաւոր հրեշանի, կամ թռչունք զիշատիչք անյագք ՚ի կերակրոց : Բերէին անձանց զկերպարանս աղջկանց հիւծելոց սովու. մարմին և զըես ուրութե, մագիլս զարհութելիս ՚ի մատունս ձեռաց և ոտից. և ականջս արջու ՚ի զլուխ իւրեանց : Անուանք նոցակ էլոն, Ռվիկւակետէ, և Կղենոն :

### Հ. Շարունակմա:

Պ. Ուր և հասանէին ծախէին զամշարակ, Ծիւնաւորէին յոր ինչ և մերձենային, զւեղանս կապտէին, և լավէին զամնայն պարէն. որաէս երբեմն յարձակեալ ՚ի ւեղան Փենէուի արքայի վիւնիկեցւոց՝ յափշտակեցին զհամադամս նոցա : Չեն՞ Դման սոցակեղծաւորք, որք շողոքորթելով նենզեն սեղանոյ ունկնդրացն իւրեանց :

### Հ. ՈՒ.Ք Էին ՃԱԿԱՏԱԳԻՐ. Ք. :

Պ. Երեքին քորք դատերք Արամազդայ և Թե-

մեայ, և Եղիոդոսի. և ը սյլոց՝ Գիշերոյ և Երիբեայ, ամենազօր աստուածուհիք վիճակաց մարդկան և սնկուանք նոցա ըստ յունաց՝ Կղոթոն, 'ի Կլաթա բայէս, որ է Ման։ Լաքեսիս 'ի Լացչառա Դէռ. և Ստրոպոս, 'ի Ա մամնկէ, և 'ի բրւուա ձայնէօ, Ան-  
դուց։ Այլ ըստ լատինացւոց՝ Նանէ, Դինիմէ, Արդիկ  
ևսև Պարկեանք։

### Հ. Հնազմնդին<sup>o</sup> սոքա Դից։

Պ. Ոչ ումեք բաց յԱրամազդայ. սակայն ըստ Հոմերոսի շատ անգամ և նոյնինքն Արամազդ մնայք վճռոյ նոցա։ Քանզի իբրև ոչ կամէր պատուհա-  
սել զՊատրոկլոս՝ ակամայ պարտաւորեցաւ 'ի նոյն  
վճռով կուսան Ճակատագրացա։

### Հ. Որպէս դրօշին Ճակատագիրք։

Պ. Կղոթոն կրսեր Ճակատագիր պաշտաման ժա-  
մու ծննդեան մերոյ՝ նկարի իբրև կուսան լուրջ և  
ծանր, զարդարեալ զառնաւուխտ պատմուՃանա-  
զաղեկատ 'ի<sup>o</sup> ձեռին ըոքել զկեանս մարդկան, և  
թագ եօթնաստեղեան 'ի գլուխ իւրում։ Լաքեսի-  
միջին Ճակատագիր որ և պաշտպանուհի հասակայ  
մարդկան՝ նկարի կուսան պաճուՃեալ աստեղանէ  
զգեստուք, և 'ի<sup>o</sup> ձեռին կալեալ զիլ մանէ զդէպ  
կամ զվիճակ մահկանացուաց։ Իսկ Ստրոպոս երի-  
ցագոյն քոյր նոցա՝ դրօշի պառաւ սկազգեց, և

ձեռին իւրում մկրատ՝ հատանէ զթելս երկարուկարձու, յօրինակ անհաւասար տիոց մերոց :

## Հ. Ո՞յշք են հրէշք դժոխոց :

Պ. ԿԵՆՏԱՐՈՒՄՔ կամ Զիածուլք, հին ժողովուրդ թեսաղիոյ, որ նախ մարզեցին զերիվարս ի մարտ, և 'ի մերձաւորաց ցայն վայր անծան ձիավարութեան ելոց՝ համարեցան յուշկապարիկս կէս մարդ և կէս ձի : Ա. ՅԼ Քերթողք որդին Եքսիոնի և ամպոյն երեւելոյ ի կերպարանս Հերայ դնեն զնոսա, ուստի և Անդունիս անուանեն :

Հ. Ջհարպայից, Գարգոնաց և կատաղեաց՝ ասացեր, ներկայ կարես ասելինձ և գդերտոնէ :

Պ. Ա. յն, սա կամ վասն տիրելոյ երից կղզեացն բաղէրիգեանց, և կամ ունելս զերկուին այլ եղբարս համասիրտս և համակամ՝ կեղծի եռամարմին լեալ : Հըաշունչ ցուլք զերիոնի կէին մսովք պանդիստաց, որոց 'ի պահպանութիւն կարգեալ էր շուն երկագլխեան և վիշապ եօթնագլխեան, զորս սպանանեալ Վահագնի զցուլսն 'ի բաց եհան :

## Հ. Ո՞վ էր Եղջերուաքաղն ՔԻՄԵՌՆՅ:

Պ. Հըէշ հրաշունչ, որ ունէր զգլուխ և զլանցս առիւծու, զիոր նոխազի, և զտուտ զվիշապի : Հըաբուղին 'ի Լիկիսյ ետ նախ առիթ առասպելիս, զի 'ի գագաթան նորս բնակէին առիւծունք, 'ի

գոտիս՝ տրոտեր երամակ այծուց, և 'ի ստոքոտս զեռային սողունք : Բեղերովիոն չէն արարեալ զայս լենոն, կեղծեցաւ զբիմեռայն կօրուսանել :

### Հ. Ո՞վ էր ՍՓԻՆԳՍ :

Պ. Առասպելեալ բորենի ոմն, որ ունէր զստինս կանանց, զմարմին շան, զտուտ վիշապի, զթէս արծուոյ, զջիրանս առիւծու, և զբարբառս մարդոյ :

### Հ. Ուր՝ յանախակի քնակէր Սփինգս :

Պ. 'Ի մմրձակայ սահմանս Թիբաց, և առնէր բընակչաց տեղւոյն առակս խրթինս և առեղծս մըթինս, զորս եթէ չկարեին լուծանել՝ գիշատէր: Պատգամախօսին Ապողոնի գուշակեալ էր զի եթէ ոք լուծանիցէ զառակս սորա՝ ինքնին զինքն կորուսանէր :

### Հ. Ո՞վ ապա ելոյծ զտուակս նորա :

Պ. Եդիպոս : Որում առաջի արար Սփինգս, ի՛ իշնդունի է յառառ-օդու լոր+սպանի, 'ի մէջօքէն՝ երիպունի, և յերեւոյն՝ եռապունի :

### Հ. Առեղծ Եդիպոս զայս առեղծանելի :

Պ. Այս՝ զի ասաց թէ մարդն է կենդանին, որ լողայութեան յափսիթերս գնալով է լոր+սպանի, 'ի կատարելութեան՝ երիսպանի, և 'ի ծերութեան ետպանի զի յենու 'ի գաւաշան :

### Հ. Զինչ առ այս Սփինգս :

Պ. Կատաղեալ հար գքարի զգլուխ իւր, և սատակեցաւ. զորոյ այլ եայլ դրօշելով զպատկեր՝ պատէին եգիպտացիք և թէքք:

### Հ. Ո՞Վ ԷՐ ՄԱՆ:

Պ. Դուստը հնոյն Գիշերոյ և երեբուի. Նկարի ըուրուսնկան կերպարանօք իրեւ կմախ մեռելոց պատառատուն զգեստուք, և խաւարային թեօք: Չեն մահու մնչեան, ոչ քուրմք, և ոչ պատահգոք. զի զսա ոչաղօթք շարժեն, և ոչ զոհք հաճեն:

### Հ. Ե՞ր մահուս եղբայր:

Պ. Ա. ՔՈՒՆ կամ Somnus որդին գիշերոյ և երեբուի, էր եղբայր Մահու: Ունէր թես նըման նմին, ընակէր 'ի խաւարին խորշ անդնդոց, ուրանօր ոչ լոյս անցանէր, ոչ կենդանութիւն: Ա. ՅԼ մէգ և լոռութիւն համատարած թագաւորէր անդ: Աստ աստուածն Քուն մեռօքինակ խորդայր 'ի վերայ յաղթ կառաւատի, և վերմակ նորա խաւար աղջամղջին:

### Հ. Ո՞յք էին ծառայք Քնոյ:

Պ. ԵՐԱԶՄԻՔ. որ շուրջ կան գքնարանաւ նը: ՄՈՐՓԵՒՍ որդին Քնոյ, որ երբեմն յանդիմանի իրեւ մանուկ անտաշ և քնարք ունելով 'ի ձեռին զփունջ մաքի կամ մեկոնի, և երբեմն փոխէ զինքն յոր ձեւ և կամի՛ աչալուրջ հսկէ 'ի վերայ հանդար-

տութեան։ Ամա պաշտօն հարկանէ և Հարպոկրտս  
կամ Համբ, որ և Զօրոս որդի Ոսկիթեայ և Խի-  
դեայ, չոթ լռութեան։

### Հ. Ո՞րպէս նկարիւր ՀԱՐՊՈԿՐՏՍ։

Պ. Պատանիկ հանդարտաբարոյ զմատն՝ ի շրջունս  
ունելով և միւս ձեռամբ կարկառելով առ սպացու  
իւր զմաղթեղջիւր առատութեան. ցուցեալ թէ  
սրարող բարեաց լռութիւն է։ Loquendi magis.  
tros homines habemus, tacendi, Deos. Խօսեց  
Հարպոկրտէս դիմորդի սահման, խու լուեց պահ. ասէ Պլու-  
տարք։ Աստուստ Հռովմայեցիք ի դրունս մեհենից  
կանգնէին զարձան սորուն, նշանակելով թէ զգաղտ-  
նիս կրօնից չէր պարտյայտնել ու ամէին։

### Հ. Ո՞յք էին դասաւորք դժոխոց։

Պ. ՄԻՆՈՍ և ՀՈՅԴԱՄԱՆԴ որդիք Արա-  
մազդաց յԵւրոպայ, և ԷՍԿՈՍ համահայր նոյին  
յԵգիայ Ծագուհւոյ. որ ՚ի սպառիլ հպատակաց  
մօրն ՚ի մահտարաժամէ՝ խնդրեաց ՚ի Հօրէն վերած-  
նել զազդ մարդկան, և Արամազդ ՚ի լուր աղօթից  
նորա փոխեաց ՚ի մարդիկ զբազմութիւն մըջնոց բը-  
քակելոց ՚ի փորոքս կաղամախի, որք յԵտոյ Միք-  
մաղոնք կոչեցան որ է ՄՇՀՆ։

### Հ. Որպէս դատէին սոքա զհոգիս մեռելոց։

Պ. Պլուտոն դժոխապետ կարգեաց զՀռադա-

մանդ դատաւոր Ասիացւոց, և զԵակոս Եւթապացւոց տուեալ երկաքանչիւրոց ցուալ 'ի ձեռու իւբեանց։ Իսկ Մինոս դատապետ՝ կալեալ 'ի ձեգին զդաւազան ուկեղէն, քննէ զդատաստանս նոցա . և յիրս կարեործ ինքն վՃիռ հատանէ։ Տուղղիոս յորէ 'ի սոսա և զՏՐԻՊՏՎՄՄԷՈՍ\*։

Հ. Ոյք էին երևելեքն 'ի ԴԱՏԱՊԱՏԵԱԼԱ  
Դժոխոց։

Պ. Հսկայք երկրածինք, և վիթխարիք անհեթեթք, զարհութելի դիմոք և վեշապային ուժով որք յղացեալ զամարտաւանութիւն՝ ծնան զեսորհուրդ ապստամբութեան, և կուտեալ լերինս 'ի վերայ լերանց՝ ետուն մարտ սաստիկ ընդ Երամազդայ և Դիցն վերնոց։ Այլ շանթ Արամազդայ, նետք Ապոլոնի, և զէնք այլոց Դից խուռն տեղալով

\* Յուրծոմ ասպանդէու Դիմեորի ընդ ծավ և յամած են աշուղիւս, Ասգուսոր գեղոյն պարուած ընկալու զնու, և նու ի գումարէն այսր՝ սնուց զսրդի նը զՏՐԻՊՏՎՄՄԷՈՍ, յօր՝ կանոնի և 'ի Գիշերի հրավ։ Զարգանոյ հոնունի գութավ 'ի զարման հօր իւրայ, որ սոնկայ գեռանել ընէ զիսրդ զնու Դիցունին սնուցաներ։ Եւ իբրև ընդ ծափ որմայն ետես Աազել նմա 'ի կըսի զսրդի իւր՝ զարհաւրեալ 'ի զսրանգէ հարսփեան վասայ դրիս-նիւն նմա։ Կերիս հաւաս պնդէն զսրանգէ հոնիսան նունիւն նորա, և զՏՐԻՊՏՎՄՄԷՈՍ և ծնացեալ 'ի կամ յգեալ 'ի Աազուր զիշպաց՝ առաջէ մարզէլ զմբրդիի 'ի իւրասան նիւն ցարէնոյ և այլոց արգանեաց երիր։ Ուսպի և զսրանն ընկալու։

՚ի վերայ նոցա՝ ունայնացուցին զիսորհուրդս չարու։  
Ծեան նոցին։

Հ. Ո՞յք էին Հսկայք հսկայիցս այսոցիկ։

Պ. Տիւփոն ծնեալ ՚ի Հերայ առանց հօր։ Որոյ  
այնքան յաղթանայր ամբարտակ մարմնոյ մինչ ու-  
նել զարևելս միով ձեռամբ, և զաւմուտս միւսովն  
իւրով։ Հարիւրաւոր գլուխք վիշապաց բուսեալք  
յուս նորա հասանէին ցերկինսն։ Մարմին նորա  
համակ թաւամազ, փետրալից և թեփալից. սրունա  
ունելով գալարածոյս զօրէն ոլորապտոյտ տտանց  
վիշապաց։ Ա. ՚ նորա ցայտէին ՚ի բաց ցոլմունա  
փայլատակմանց, և ՚ի բերանոյ փսխէր ՚ի դուրս զբոց  
հրոյ։ Ա. յլ ՚ի վերայ այսը ամենայնի դեռևս յաղթեալ  
յերկիր կործանեցաւ, և կղզին Սիկիլիա եղաւ կըն.  
՚ի վերայ նորա զի մի յարեցէ կըկին։

Հ. Ո՞վ էր Բ. Բ. Ա. Բ., Բերիարիոս կամ Եգէոն։

Պ. Յիսնագլխեան և հարիւրաջեան վիթխարի, որ  
սլարսատէր յԱ. բամազդ՝ ՚ի մի ձիգ՝ զհարիւրս վիմաց։  
Ա. յլ յաղթեալ ՚ի նմանէ միւեցաւ ՚ի խորշ լերինն  
Ետնայ, ուր քանիցս և լրջէ զկող իւր՝ կայծակունք  
հրոյ ՚ի բաց ցոլանան ՚ի լեռնէ անտի։

Հ. Ո՞վ էր Ե. Ն. Ա. Վ. Ո. Ս.։

Պ. Հսկայ մարտադիր, որ չկարացեալ անձամբ  
՚ի վէգ գալ վասն ծերութեան՝ առաքեաց զԱվթու

և զԵսփիաղտէս զորդիս իւր փոխանակ իւր։ Որոց հասեալ հասարակաց մասին շուառութեան՝ կործանեցան ՚ի գժոիս։

Հ. Զինչ և վասն ԹԻՏՏԻՒՍՆՑ որդւոյն Արամազդայ յԵղովրայ։

Պ. Ծնեալ սորա յստորեքրեայ այրի ուրեք այնքան յաղթ և վիթիարի, մինչ երկիր պատառեցաւ տալ ճանապարհ ելիցն, յորմէ և երկրածին անուանեցաւ։ Հերա կաշտեաց զսա ամբաստանել զՆատովնէ շնութեան, այլ ՚ի պատիժ պյոր զրպարտութեան շանթեցաւ յԱրամազդայ ՚ի դժոիս։ ուր գրաւէ գետին զերից վտաւանաց՝ ՚ի տեղի ինքեան, և արծուի դիշատիչ կրծէ միշտ ընեարդս նորա զօրըստօրէն վերաբուսեալ։

Հ. ՈՎ ՏԻՏՍՆՆ եղբայր կրովնի։

Պ. Հակայ մարտադիր, որ նախ զկրովն ժառանգատել յաթոռոյ կապեաց ՚ի սանդարամետս։ Ապա և ընդ Արամազդ ՚ի կոիւ եկեալ յաղագս յափշտակելոյ նորա զթագաւորութիւն իւր՝ յաղթեալ դատապարտեցաւ ՚ի դժոիս իւրովքն հանդերձ։ Եւ արդարեւ Յիմու է ո՛ր ընդ մէնս տոն զննէն Հոկտոբերին։

Հ. ՈՎ ՊԼԻԳԻՏՍՆՆ իցէ արդեօք։

Պ. Արքայ Պարիթեայց, որ լուեսութէ Ապօզն ընդ կորոնիս յիւր դուստրն անկաւ, եւ ՚ի Դեղ-

փիս և հրդեհեաց զտաճար նորա : Ապողոն նետան  
հար արար զնա ՚ի դժոխս, ՚ի վերուստ գլխոյ նորա  
կախելով զվէմ մի մեծ. որում մնայ հուպ ընդ  
հուպ անկանիլ ՚ի վերայ՝ և ջանջախել զինքն,  
Ուստի և զօրհանապաղ աղաղակէ, Ո-սիր չ-ըրտ-  
բա-մի-ն խրագուց, և մ' ամուեր զԴիս :

Հ. Զինչ և վասն Ե-ՔՍՒՌՆԻ որդւոյ սորա :

Պ. Սա զիւը քըս սպան, ներեցաւ ՚ի Դից և  
առաւ յերկինս : Հպարտացեալ այսր նորոդ բար-  
ձու իւրով կամեցաւ բռնաբարել զտիկին Արա-  
մազդայ, զոր զեկուցեալ Ըանթառաքին՝ զամպ ՚ի  
նմանութիւն Հերայ առաքեաց առ նա : Ընդ ո-  
րումանկեալ Ե-Քսին ցկնեաց զԶիացուլս և աքսո-  
քեցաւ յերկնից : Ա. Ա. ը որում այս անամօթ ուր  
և հասանէրն՝ պարծէր թէ զԹագուհին Դից պատ-  
շուեցի, շանթահար լեալ ՚ի դժոխս՝ կապեցաւ յանիւ  
մշտահոլով յոր ը առասպելոց հոլովի մինչ ցպրդ :

Հ. Չդատանպարտեզաւ և հպարտն ԱԱ. Ա. Ա. Ա.  
ՆԵՌՍ որդի Եւոզայ արքային Եղիսացւոց :

Պ. Ա. Ա. Քանզի ցանկացեալ յաստուածոց կար-  
գի համարիլ հնարեաց որոտմունս և կայծակունս,  
և արկեալ կամուրջ պղնձի ՚ի վերայ քաղաքին  
ընթացուցանէր ՚ի նմա զկառս իւր ամեհի երիւլա-  
րօք, և առնէր շառաշիւն մեծ և դլրդիւն որու-

տաձայն. տեղայր ՚ի վերուստ ջահս բոցավառսյօրինակ Արամագդայ. ընդ որ չհանդուրժեալ ՚ի իսպի շանթահար իջոյց զնա յանդունդս երկրի:

### Հ. Ո՞վ էր ՍԻՍՏՓՈՆ:

Պ. Անուանի ոմն աւազակ, որ դատապարտեալ ՚ի դժոխա՝ հրամայեցաւ հոլովել ՚ի գագաթ լերին բարձու զվեր մեծ և դժուարաշարժ: Զոր քանիցս և հուպ տարեալ հասուցանէ գագաթան՝ գլորել վիմին սահի ՚ի իսոնարհ և լինի նմա առիթ մշանցենական ճգանց:

### Հ. Ո՞յք ԲԵԼԵՑՆԻ, կամ ԲԵԼԵՑԴԵԿԱՆՔ:

Պ. Յիսնաւոր գստերք Բելայ. լուեալ հօր սոցա ՚ի սատգամախօսէն թէ մին յուրջուց իւրոց կենախուզ լինէր ինքեան՝ հրաման տայր դստերց խեղդամահ: կորուսանել զարս իւրեանց ՚ի քուն: Ամուսնացեալ յիսնիցս ընդ յիսուն Հօրեղբօրորդիս իւրեանց՝ սուր եղեալ կոտորեցին զնոսա, ուր միայն Հիւալընեստէ ինայեց յիւր Նիւնկէոս: Զայս անքաւ չարիս սոցա պատժեաց Արամագդ, երբ դատապարտեաց զնոսա հանել բջուր ՚ի խոր հորոյ և ընուլ զծակ կարաս ՚ի դժոխա: Առաջին սբութիւն կահանց է այրասէր լինիլ. զի որ նենգէ առն իւրում, նենգէ Աստուծոյ:


Հ. Մոռացա՞ր զՏԵՆՏԵՆԱԾՈՍ զորդին Արամազդայ և ՊՂոտայ յաւերժահարսին :

Պ. Ոչ բնաւ երբէք : Սա կոչունս արարեալ Դից՝ ի փորձ անխաըութեան նոցա եհան ՚ի սեղան զմարմին զորդւոյ իւրոյ Պեղոպայ՝ խորովեալ : Հրաժարեցան Դիք ՚ի սանդարամետական խնջոյից աստի, և Դիմետրէ միայն հաղորդեալ այնմ, սպառեաց զմի կեղմն քամակին : Զգացեալ Դիոսի ըզդաւարձանութիւն՝ առաքեաց զշերմէս ՚ի կեանս զՊեղոպս վերածել ուս փղոսկրեայ հաստելով նմին իսկ զՏանտաղոս դատապարտեաց ՚ի դժոխս յաւիտենական ծարաւու և սովու ՚ի մէջ լիուե ուտելեաց և ըմպելեաց միանգամայն : Զի պարանոցաթաղ խրեալ ՚ի ջուր ականակիտ ըմպել ոչ կարէ, յօրինակ ագահաց՝ որ ունին և ոչ վայելեն. զի կամ շոսյլացուսցեն զորդիս, և կամ լցցեն յօտարին ծոցընդ կանայս և զինչս իւրեանց :

Հ. Բանայցին՝ քան զթողուլ մեր զարքայութէ Դժոխոց, կարճու աւել ինձ թէ ո՞ր էր սրդեօ կայան Երանելեաց ՚ի նմա :

Պ. Այս : Կայան Երանելեաց ՚ի դժոխս, կամ Արքայութիւն զոր խոստանայր աշակարտացն Պղատոնյետ աստեացն կոչե Եղիւղեան, դաշտ. առօ դուռ լսուած, յարձակելոյ : զի հոդիք արդարոց արձակեալ

ի կապանաց մարմնոյ՝ ժամանին անդր : Ուրեմն զոր  
ինչ միանգամ հրաժարանս և բերելը թիւնս եղին  
հինք, են սինք, մարմնաւորք և անցաւորք : Վասն  
զի մոլորեալ նոցայալտ հոգեփոխութեան աղան-  
դոյն, առընթեր երանութեանց և տանջանաց դը-  
ժուսոց կեղծեցին զԼէթ. զի արքեալ նոցա ի ջըոյն  
մոռացութեանց անյուշ արասցեն զբերկը թիւն և  
դվիշոս միանգամայն. և ընդ փղոսկը դարպան  
ցանկոյն ելանից են գալ նորազգեաց մարմնով յայս  
աշխարհ ցաւոց : Արդ ժամէ և մեզ թողուլ զվայրէ  
սանդարամետից, և ընդ դարպան ցանկոյդ ելանել  
ի զնին գեղեցկագոյն ևս առարկայից :



### ԳԼՈՒԽ ԵՒԹՆԵՐՈՐԴ

#### Հ. ԱՌԵ ԵՐ Ապողոն :

Պ. Ապողոն ածոց բազմաց է անուն, յորս երե-  
ելի էր որդին Արամաղդայ և Ղատոնայ դստեր  
կէուսի ծնեալ ի Դեղփոս, ուր ասպաստանեալ ան-  
կաւ մայր նորա յերեսաց հալածանացն Հերայ կը-  
նո՞ն Արամաղդայ . և ծնաւ երկուորեակս զԱպո-  
ղոն և զԱնահիտ, կամ զԱրե և զԼուսին :

Հ. Զի՞նչ է յատկութիւն Ապողոնի :

Պ. Լինիւ աստուած բժշկութեան, Երաժշուու Գերթողութեան, և Ճարտասանութեան : Այ ընկալեալ ՅԱրամազդայ զկանուխ գիտութիւն ապագայից՝ զքուրմա իւր կանխագետ գուշակութեամբ լուծութեան ելից :

Հ. Զի՞նչ, Քաջագործութիւնս արար Ապողոն :

Պ. Խսկոյն ընդ ծնանիլն ստացաւ զհասակ կատարելութեան իւրոյ, և սպան կապարձիւք զվիշապն Պիւթոն, զոր առաքեալ Էր Հերայ կնոքն Արամազդայ հալածեալ զՊատոնէ զմայր իւր : Ապամիացեալ ընդ Անահտայ քեռն իւրում, ընըեաց զորդիս Նէոբայ վասն անարգանացն զոր եղեալ էին իմայր իւրեանց . և զնոյն ինքն զՆէոբէ փոխեցնի ի վէմ :

Հ. Ընդ Է՞ր վառեց սա զԱրամազդ ընդ գէմիւր:

Պ. Արտամազդ սպան շանթիւ իւրուլ զԵսկիւլապիս զօրդին Ապողոնի, վասն յարուցանելոյ նորա զմռեալս զօրութեամբ դեղոց իւրոց : Խսկ Ապողոն զկիլոպապայս զշանթարարս նորա կորոյս խմբովն և միացաւ ընդ Թոսիդոնի յապստամբութիւն ըդէմ միահեծան տէրութեան նորա, առ որ և աքարեցաւն յերկնից :

Հ. Խեղճ, ո՞ւր զնաց ապա :

Պ. Եմուտ ՚ի հովիւ խաշանց Աղմետոսի, ուր և  
եղիտ զքնար : Հերմէս գողացաւ զոմանա յարջա-  
ռոց անտի. և այնինչ սպառնայր նմա Ապողոն դմբ-  
ձուցանել զնոսա, գողացաւ Հերմէս և զքնարն ՚ի  
նմանէ : Ապա ձեռնատու եղաւ Պոսիդոնի ՚ի շնուած  
պարսպացն Եղիոնի Եւ իբրև անխօյեաց Ղաւոմե-  
դոն արքայ տեղւոյն վարձատրել նմա ըստ դաշնն  
ժանախախիւ սպառնց Ապողոն զբնակից քաղաքին:

Հ. Չսիրէ՞ր սա զՅակին՛թոս մանուկ գեղեցիկ :

Պ. Այս զոր և սպան վրիպակաւ. քանզի իբրև  
աւուր միում նշանի խաղային սա և Յակին՛թոս,  
Զեփիւռ նախանձեալ ընդ սէլն Ապողոնի ընդ պա-  
տանին՝ ուժգնակի վշմամբ մզեաց զգնատակն ձը-  
գեալ ՚ի նմանէ, ընկեց ՚ի զըւխ Յակին՛թայ, և  
մեռոյց զնա : Ապողոն զարիւն սըրա ՚ի մանուշակ  
փոխադրեաց :

Հ. Զկաթոգնէ՞ր և կիպրոսի Ապողոն :

Պ. Այս Եւ քանզի տարաբաղտութեամբ սպան  
նա զիւր համասուն եղն, և մորմոքէր անմի իթաք  
վասն կորատեան, ինդրեաց յաստուծոց զի մշն-  
չենասցի իւր սուգ. վասնորոյ և Ապողոն փոխեաց զնա  
՚ի նոճի սպատերեւ : Արոյն ոստք ՚ի զարդս համա-  
րէին յուղարկաւորութիւ մեռելոց առ նախնիս ազգաց :

Հ. Չեզի՞տ Ապողոն զնորհս զԴափնեայ կոււին:

Պ. Ոչ զի այնինչ զակատեալ Ս.պողոնի ՚ի գեղ սի-  
րուհւոյն զշետ պնդէր նմա, փոխեցաւ կոյսն ՚ի սար-  
դենի ծառ՝ ՚ի նշան յարատե պարկելութեան,  
զոր ոչ ցուբու և ոչ տօթ եղծանել զօրեն։ Նկար-  
չի ուրուք դրօշել կամելով զպատկեր Ս.պողոնի  
արգելաւ ասեն, որպէս թէ փայտ դաբնիդեայ  
զգայր տակաւին զանպատկառութիւն Ս.եղողոնի իբ-  
քե իւր համանուն կոյս։

Հ. Զի՞նչ և յաւերժահարսն Բ.Ա.Դ.Ն.Ը.Ց.

Պ. Ս.պողոն ընդ երկար տարփացեալ նմա հե-  
տամուտ լիներ, այլ նա լաւ համարեցաւ գետա-  
կուր լինիլ, քան տալ զի՞նքն ՚ի կամս անառակին։  
Զոհելով զի՞նքն պատարագ կուսուե իւրոյ ոչ միայն  
Ս.պողոնի այլ և մահու յաղթանակեաց. զի յան-  
մահս գրեցաւ։

Հ. Զի՞նչ և Լ.Ե.ԴԿՈԹ.Է գուստը Որքամայ ար-  
քային Բ.աբելովի։

Պ. Սա զկամս Ս.պողոնի կատարեալ թաղի կեն-  
դանւոյն ՚ի մահ։ Իսկ տարփածուն չկարացեալ յա-  
րուցանել ՚ի մեռելոց՝ մշէ զներկտար ՚ի դին անկեն-  
դան, և փոխադրէ զնա ՚ի Զմռսենի։ Իսկ զբոյր  
սորա զեղիտէ զոր յառաջն սիրէր Ս.պողոն, փո-  
խեաց յԱ.Բ.Խ.Պ.Պ.Ռ.։

Հ. Ի վէգ մտին<sup>o</sup> ոմանք ընդ Ապողոնի ՚ի փորձ նուազածութեան :

Պ. Այս, նախ ՄԱՐՏՈՒՅ, յանդուգն փողահար ոմն ՚ի փորձ եկեալ Ապողոնի յաղթեցաւ և մաշ-կեցաւ կենդանւոյն : Ապա ուան զնոյն փորձ փոր-ձեաց, ուր ՄԻԴԱՍ արքայ Փռիւգիոյ նմա տալով զյաղթանակն, ստացաւ ականջս իշոյ սակս թանձ-րալուր դանդաղութեան զգայուեն : Զորս տեսել սավըին պատուիրեցաւ թէալէտ ՚ի ծածուկ պա-հել, այլ ժչ կարացեալ եկաց առ հորով միով, և սուլեաց ՚ի ներքս թէ Արտայ ՄԻԴԱՍ անի ականջս իշոյ : և ահա լնդ ձայնին բուսեալ եղեգանց՝ արտաքս զնոյն բան սրնդէին \* :

Հ. Ապողոն մնաց յերկըի :

Պ. Ոչ զի ողոքմելով Արամազդայ յաքսորանա նորա վերադրեաց յերկինս, և անուն կարդացեալ նմա Փիքոս, պատուիրեաց լուսատու լինիլաշխարհի, ուստի և Արեն հաւաքեցաւ :

\* Այս մետա որդոյ շնչառադց ՚ի սպանդարամեդէն բա- սուէ պարսկին սպիտակացանելոյ յար ինչ և հոդիցինն՝ շնչառա- ց այսպիս ամենայն ինչն մո սահի եր. այլ սուպէւ ու իարելով՝ հայ իւրնմէր : Արդ ահանջօնն իշոյ՝ շա-շանի դիւրալոր նիւ սուսան՝ ՚ի շնչառարթա-թիւնս ֆազացաց և գուսաց և իւր զօրս-թէամբ սպիտակացանն՝ պշեառադց մասնիւն սըսէ իւրքեաց գոնի բակալ :

Հ. Եին սորա և այլ անուանք :

Պ. Այս, Պարսիկ զնա միթրոս միհր, և ապտաք աւեն: Երգիպս ացիք՝ Հորոս կամ Հուր: Հնդիկք՝ Սուրիա, լատինք՝ Աօլ, Մոյն, Ա. Եւ Եղու: Կոչի և կին: Ծիռոս ի կինթոս լեռնէն Դիզոսի յորմէ և Դեղէոս: Փանէոս, Երեսրու: Դեղվիոս՝ ի Դեղվիս քաղաքն Բիովսիոյ, ուր պատգամախօսէց Ապողըն: Ասի թէ ի ծննդւան ՏԵՍՄՆ մերոյ լռեաց իղձ Ապողնի, և ՚ի ինդրել Օգոստոսի զբիարդն՝ պատասխանի արար պատգամախօսն, Առաջուած Խնկէայէու ջնառ ՀՀՀէաստան, և պատահիքէաց Ա. Եւ պատգամախօս Անիս Դիզիմոս, Երկուորեակ. զի արե և լուսին ՚ի մի որ ծնան: Նոմիռոս, այս է Հան- կամ-Օրէնտիր: Պի ան, Տըրմանքորտ: Փիքոս, և Պիւթիռու՝ զի սպան զօձն Պիւթան:

Հ. Որպէս յանդրի հանի Ապողնի:

Պ. Երիտասարդ անմօրուս, առոյդ և քաջանի դակն, ճառագայթածաւալ գլխով. մերթ զգնաց և մերթ զնետս և զաղեղն ՚ի ձեռին՝ և զկապար ճակիր ՚ի թիկունս կըելովս:

Հ. Զինը ինչ սուրբ են Ապողնի:

Պ. ՚Ի կենդանեց անտի ագռաւ, զի գուշակէ զփոր մունս եղանակաց փոփոխութ ձայնին: կարապ, Նախասես եղեալ մահուն՝ երգէ քաղցրաձայն:

Գայլ որոյ սրատես աչս ունելով՝ զզօրուի գուշակուն յայտ առնէ։ Բաղէ, պայծառաշեայ իբրև զարեգակն և Անքաղաղ, որ գուշակէ զելուստ նորա։ Իսկ ի տնկոց՝ Սարդին։

Հ. Ոյ ք էին որդիք Ապողոնի, որ և Արե որդիք։

Պ. Համար հոմանեացն Ապողոնի ցուցանէ զիթիւ որդւոց նը. նյլ մեք զերեելիսն ի նոցանէ եեթյիշեացուք, որք են Եսիւ-պատիս և \*Պայլոն։ Որ խնդրեաց ասեն ի հօրէ իւրմէ թոյլ տալ ինքեան գէթ յօր մի վարել զկառմ Արեգական։ Ապողոն, զի երդուեալ էր ի լիճ Ստիգեան շանխայել նմա զոր ինչ և խնդրէր թոյլետ։ Ընդ որ մանուկն տիմար իւրով անկրթուք իւրտուցեալ զերիվարսն, և վեր ի վայրյածեցուցեալ զկառմն հըղեհեաց զերկին և զերկիրս

\* Անդորյ Պայլոնն որ ի հրեղէն կառա Արեգուն, Զիւրաց իւսել լւէ զնն իցէ լսէ յիւր անույթ շըջոն։ Ի տպրաց բաղադրին առաս նոր լսէն զիւր լսէ յիւր սուհմոն, երբ կայծուինաւար՝ ի պան գետ սասպէտը կորոյս զոմենայն։ Մրադեր Դեփուղ զիւրըն Ինըրսս զանիրը պատահին, Կուլ մէջառահմոն, ընդ որւ ընդ ծուլ՝ ի պարս ելերին։ Այլնո ու կալսու, ու զուոյն միջին՝ և ու խըրագ Հօր, Արյեաց մամաշն ըզընս իւր ի հսոր, և սասպու ի զուր։ Դու որ ամբողոքու ի գերտգուն կառա գնիգեսսե քոն, Ամուսուք Անոս՝ մարտոցի իւսւր՝ վարել զոմենայն։ Տիւր նախ մանսուի, ի մատուս-է առն լսէն զիւրին։ Զիւր կ հարիւցիս իւրօտիւ միոյն երբ առնդի ոս քոն։

միանգամայն, և շանթահար ՚ի Դիոսէ սուզաւ ՚ի  
Պլոն գետ։ Հրդե՛ն մեծ դիպեալ յիտալիա առ  
Պայթոնիւն արքայիւ հիմեցաւ կեղծոյս։

### ԳԼՈՒԽ ՈՒԹՆԵՐՈՐԴ

Հ. Ո՞վ էր ԱՆԱՀԻՄ. կամ ԴԻԱՆԱ։

Պ. Անահիտք երեք էին Ծուռով այլերելին ՚ի  
նոսա ճանաչեր դուստր Արամազդայ և Ղատոնի,  
Համածին քոյր Ապոլոնի։ Որոյ տեսեալ զերկունս  
ծննդեան մօրն՝ ուխտեաց զինքն մշնջենաւոր կու-  
սութեան, և պաշտիւր իբրև ածուհի որսոց։

Հ. Պահեստ սա միշտ անախտ զկուսութիւն իւր,

Պ. Ոչ զի տարփացաւ Պանայ դիցն հովուաց, և  
այնքան սիրահարեցաւ ՚ի գեղ հովուին Ենդիմէոնի  
մինչ զգիշեր, ամ գողանել յերկնից ՚ի գիրկւ նորա։

Հ. Զինչ այլ գործ ք են Անահտայ։

Պ. զԱկաէոն զթոռն կադմոսի փոխեալ յեղք։  
ըու արկ շանց իւրոց գզել ՚ի մահ։ Զի դիպաւ ին  
տեսեալ էր նորա զկոյմն գօտէպինդ լուանիլ մերկ  
յաղթեր ուրեք։

Հ. Զինչ այլ։

Պ. Յորժամ Բըիտոմարտիս կոյս պարկեշտասով

խոյս տուեալ՝ ի տուփանացն մինոսի տարվածուին իւրոյ արկ զբնքն 'ի ծով՝ և ապա 'ի ձկնորսէն 'ի դուրս ցանցեցաւ, Անահիտ արար զնա Դիցուհի :

Հ. Զի՞նչ արար ընդ Քիովիէ դուստր Դետաղայ  
Պ. Ցորժամ Քիովիէ Ապողոնի և Հերմեսի միանգամայն ետ զկուսութիւն իւր, զՓիլամոն զերեելի քնարնահար ՅԱպողոնէ, և զՍւտոլիքոս գող 'ի Հերմեայ երկուորեակ ծնաւ, և պարծէր ընդ յիւր անամօթութիւն գեղով Լուսնի 'ի վէգ եկեալ՝ նետահար եղեւ Անահիտ 'ի լեզու լքին, և անդէն լոեցոյց զնա :

Հ. Ե՞ն և այլանուանք սորա :

Պ. Այս կոչէր սա և Արտեմիս Եռագլուխ կամ Երեքդիմեան, որ է ասել Կորուսոնին, Հիսուսոնին, և Բաւրուսոնին, կամ Արուսոնին : 'Ի յերկինս Լուսա, յերկրի՝ Դիանա, և 'ի դժոխս Հեկատէ : Եգիպտացիք բութաստիս կոչէին զնա, իսկ Հայք առ Ագաթանգեղոսի, Տիգին, Կեռոն, և Կէնդինեանին Հայաստանեայց : 'Ի գլուխս Ճանապարհաց Եռուղեան ասիւր. յերկունս կանանց՝ Լուսինա. և և կենթիա, 'ի կինթոս լեռնէ, և այլն :

Հ. Որպէս Նկարիւր Անահիտ :

Պ. Կուսան գօտէալինդ, քաջադիտակն, գեղեցիկ և մծափառ, լուսին եղերաւոր 'ի գլուխս, աղեղն

՚ի ձեռին, և կասկարձու ՚ի թիկան։ Եքրեւ որսորդ ՚ի ցուհի՝ մերկասրուն է և տրեխանի յոտս իւր։ յառաջոյ նորա սուրհան յաւերժահարսունք, և ՚ի յետուստ՝ շունք որսունք։ Այլիբրեւ Դժխոյ գիշերոյ նկարի բազմեալ ՚ի կառս վարեալ լծով եղնըկանց։

Հ. Ուր առաւել պաշտիւր սա։

Պ. ՚Ի հայաստան, ուր ըստ Դիտղուի սիկիլացւոյ զոհէին նման նախնիք մեր ուստերս և զդստերս իւրեանց։ ՚Ի Տաւրիկէ, ուր զոհէին բնակիչք զնաւակոծեալն յեկաց առ ծովեզերօքն իւրեանց։ ՚Ի Սպարտա, ուր առ բազնեաւ սորա գանամահ առնէին զմանկունս։ Եւ այսպէս գըեթէ յամնայն ուրեք։ Վկայ քեզ այսմ երեւելի \* մեհան սորա յեփեսոս, զոր կառոյց աշխարհ և զարմացաւ ընդ այն իբրև յիւր հրաշ։

\* Ա. յա Հայակապ գոճոր հազն Հազ հագործեալ յամ 227, իւսոյ ՚Ի գլուխ, 127 Տորմորսնեայ, ուսոնց վանեսուն ՚իւնիքն բարձրս-Աս-Մբ։ Ուրոց իւրագոն լւն-ը էր ոդորգեւ ուսոնյին ինչ Յագուս-որի Ա. յւ ՚Ի Գիշերին, յորում գնաց Անոնհիք նոնիս-Բոր լինիւ Աղեւաների, Երանուսոս հրյուտ որոր զմեւեն զոյն սոսնչել։ Չի և արուս-Աս-Մբ գանեայ, հագնօշեսորիսոյ յագուս զիւր ուսոն։

## ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ :

Հ. Ավելի ՆԱՆԿ կամ ԱԹԵՆԱՅ, և քանի՞ :

Պ. Պատմութիւն Նանէս հինգ յիշէ, այլ մեք աւանդեսցուք փոքր ՚ի շատէ զՆանեայ՝ որյարամազդայ ծնաւ։ Քանզի ըստ առասպելաց՝ Որմզդի ընդ իւրոյ կնոջ պալութիւն արտմեալ եհար զՃակատ իւր և յետ երից ամսոց ծնաւ յուղղւոյ. անտի իւրմէ մանկաբարձութեամբն Հեփեստեայ՝ զՊալսս զինավառեալ աստուածուհին իմաստութեան և պատերազմի։ Որոյ ՚ի ծննդեան անձըն ուկի ռեղացին Դիք ՚ի Հռոդոս կղզե։

Հ. Զօրաւո՞ր ոք էր Նանէ։

Պ. Այս, և համազօք հօր իւրում, այլ ՚ի վար առնոյր միշտ զզօրութիւն իւր ՚ի բարիս մարդկան։ Վէճ սորա ընդ Պոսիդոնի պատմեցաք ՚ի վեր անդր, յորում յաղթող գտեալ անուանեաց զքաղաքն Աթէնք, և եկաց պաշտպան նմա։

Հ. Առ ինչ վէճ սորա ընդ Արաքանէ։

Պ. Արաքանէ կին կողովոնացի ներհունյարհեստ ասղնէգործութեան ՚ի փորձ եմուտ ընդ Նանեայ զօրութեան հանձարոյ իւրոյ, այլ ՚ի պարաւութիւն մատնեալ ՚ի վերջոյ՝ զինքն յուսահատութեամբ կախեաց, և աստուածուհին փոխադրեց զնա ՚ի սարդ։

Հ. Զէր սա յատուել պաշտպանուհի Եղիոնի :

Պ. Ա. Յ. : Գանգի ՚ի շինել անդ միջնաբերդի քաղաքին և ՚ի նախա մեհենին Նանեայ՝ անկառ յերկնից ասեն դրօշ Դիցուհւոյն Պալլադիում, Պալլարձան, կամ Պալանդը Կոչեցեալ։ Իղձ Ասլողմնի պատգամախուսեաց՝ թէ ցորչափ կայցէ և մնասցէ մյս արձան՝ ՚ի քաղաք անդը, ոչ ինչ թշնամի մնդիցէ նոցա :

Հ. Ապա բարիոք զգուշութեամբ՝ պահեցաւ :

Պ. Երկար ժամանակ՝ Ա. Յ. ՚ի մեծ պատերազմին Տրոյիոյ զեկուցեալ Յունաց թէ հնարին չէր լսանանել ինչ քաղաքին ցորչափ անդ էր Պալլարձան, զնիւսկս և զԴիմետրիոս զանխուլ ՚ի քաղաքն թողացուցեալ գողացան նոքօք զպնդութիւն քաղաքին, և վաղվաղակի յետ այնմ տիրեցին նմա։ Եւ ո՞ր տէրութիւն ոչ խոնարհեցաւ լքեալ թողեալ ՚ի Պալլասայ. կամիմ, յիմաստութենէ :

Հ. Զինչ այլ բարիս արար Նանէ :

Պ. Ուսոյց մարդկան զնաւագործութիւն, զնաւագարութիւն, զման, զկար, զոստայնակութիւն, և որպէս ասի, եգիտ և զսրինդ։ Սա օգնեաց և Պերսիդեայ ընդդէմ մնդուսայ՝ միոյ ՚ի Գարգոնաց անտի, զորոյ և զքարացուցիչ զլուխն հատեալ յեռեաց յիւրում վահանի :

Հ. Ե՞ն Նանեայ և այլ անուանք :

Պ. Այս, Կոչի Սիներվաւ. Նատալարար, զի գոլով  
աստուածուհի պատերազմի կարծէ զթիւ մարդկան:  
բայց զի լատին ձայնդ Մինուեւ, կըկին զօրութիւնս  
՚ի մէջ բերէ, կոչի և Սպառհացու զի խոժոռահայեաց  
դիմօք ահ և արհօր սպառնայ ածել ՚ի հայե-  
ցողս իւր։ Եւ կամ ըս որում աստուածուհի իմաս-  
տութեան՝ Խրադառ, ՚ի մին ձայնէ՝ որ Խրադ լի  
ընդ մեզ։ Աստուստ մարդիկ որ ժամին ուսուցանէ ՝  
կիմաստնագոյնս ինքեանց՝ յառակ հանին իբր այն  
թէ սυց Աթηնան. Խոզ զԱՌԵԱՆ, ուսուցանէ։

Հ. Ընդէ՞ր Յոյնք զնա ԱՌԵՆԱՍ անուանեցին։

Պ. Աթηնա, որ և Անադիու, Անդիեցի, Անիոնուսուն-  
թոյնք զնա անուանեցին, զի ծնաւ յուղղւոյ հօրն  
անկարօտ կաթին, ուստի և Ամητրօս, Անմոյր։ Պը-  
ղատոն համարի զԱՌԵԻՆԱ, Ա.ԱԴ-ԹԵ-Ժ-Ն-Ն նշանակել։  
Իսկ այլք թէ յայս անուն կոչեցաւ, զի ոչ ելքէք  
ստրկացաւ։ Եւ արդարեւ ոյր իմադան ըս Ատոյի-  
կեանց՝ է մայն ազադ։

Հ. Ուստի՞ ծագի և անունդ Պալսս։

Պ. Նանէ Պալսս անուանի, զի սպան զԱԿայ ոմն  
յայդ անուն, կամ՝ ի լճէն Պալսսայ ուր նախ մարդ-  
կան երեւցաւ. և կամ աπօ του ՚ոլլειν το ծօրս,  
՚ի մամելոյ նիշուին։

Հ. Ընդէ՞ր կոչի սա Պարթենոն, որ և կոյս։

Պ. Զի՞ Նանէ, ըստ Վեստայ և Ծնահտայ՝ եկաց  
մնաց կոյս անփորձ՝ ի կեանս իւր : Եւ այնքան  
սիրուն գտաւ պարկեշտութեան, մինչ զթրէսիաս,  
որ ետես զինքն լուանիլ յազբերն Հիլիկոնի կու-  
րացոյց : Այլ մայթ Թրէսիդեայ ինդրեաց յա-  
տուծոց, զի որովհետեւ որդի իւր զրկեցաւն ՚ի մար-  
մնաւոր տեսութենէ պայծառասցի տեսութեամբ  
մոռաց, և այսպէս տուաւ նմա հոգի մարգարէուն  
տեսանել նա և զանտեսմն ՚ի տեսողաց :

Հ. Զինչ բաղոյականութիւնս ուսանիլ կարեմք  
յօրինակէս :

Պ. Թէ պարտ է տիկնաց ոչ միայն պարկեշտանալ  
՚ի զգեստս առ ՚ի ծածկոյթ մնրկութեան. այլև փա-  
քելի ամօթիածուք շիջուցանել զայրատ հայեցու-  
ածս տարփալեաց իւրեանց, որ այնիքն է կուրացու-  
ցանել զնոսա ՚ի ցանկուտ և ՚ի կաթոտ խորհրդոց  
Քարք հայեցիւք իւրովք Ծիւնէ զմարդիկ, և կին  
սիրուն պշնուլով իւրով :

Հ. Զիարդ կարէ կին իշել կրից օտարաց :

Պ. Այսպէս. որ եթէ այլք զակատեալ ՚ի գեղն  
պշնուցուն յերես իւր անդը նա զիւր աչս ՚ի վայր խո-  
նարհեցուսցէ : Վասնզի ցանկութիւն զինեալ նստե-  
լով յաչս տարփածուաց, իբրև ընդ պշտուհանս ան-  
տուստ նետս կորովիս Ծափանձէ ՚ի սիրտ, և խոցէ

զնոսա 'ի մահ հոգւոյ և մարժնոյ ։ Բայց՝ եթէ ը օրինակին Նանեայ՝ տեղի շտոն տիկնայք այսմ՝ ցանկութիւն շարեաց փոխի 'ի բարիս. զի ջուր ընդ քար շդտեալ անցս՝ փոխէ զիւր գնացս. և միտք 'ի շարին ցըտեալ տեղիս՝ ի բարին դիմէ։ Այլ մեք դարձեալ 'ի պատմութիւն մեր։

Հ. Կարեմ ասել ինձ Ծէ ընդէր Տրիտոնէս կոչցաւ Նանէ։

Պ. Այն ։ Տրιտոն, 'ի նախնի Բիովտեան լեզուն նշանակէր պէտի, և Նանէ 'ի գլխոցն Արամազդայ ծնաւ։ Տրիտոն կոչէր և լիձն, ուր նախ անաւ Աթենաս, և ուր՝ 'ի պատիւ նր կատարէին կուսանք զիսաղ մականաց։ Զի ամի ամի ժողովեալ օրիորդաց և ամ բազմուն մերձակայ սահմանաց 'ի խումբ խումբ՝ պարսատէին քարինս և մականէին զիրեարս անհնարին կատաղուք։ Ուրանօր ծվ յօրիորդացն նախ մեռանէր, շամարիւր կոյս, ուստի և դինորուն արհամարհանօք լնկեցեալ լինէր 'ի լիձ անդը. բայց որ վէրս սաստիկս ընկալեալ, դեռ կենդանի կեայր եղեալ 'ի կառս յարթանակի մեծափառ հանդիսիւ ածիւր 'ի քաղաք անդը։

Հ. Զկոչի սա 'Եօγատης, Եժառապիս, կամ Տակուհի

Պ. Այն ։ Սամէացիք յայդ անուն կոչէին զՆանէ. վասն զի եղիտ նա զանազան արհեստս շահեռս, մանաւանդ զոստայնանկութիւն և զկար։

Հ. ԱՅԼԵՍ անուն չունի՞ բաց՝ ի սոցունց :

Պ. Ունի : Եւ կոչե Մուսիկա, Նուռդ. նախ՝ զի ըստ  
Պինֆունի վիշապք և օձք, որք էին փոխանակ հերաց  
գլխոյն մեղուսայ գարդոնի՝ ի հնչել նուագարանաց  
քնարի և կիթառի մերձ ինքեանց՝ յառնէին՝ ի ձայն :  
Եւ երկրորդ՝ զի՝ ի սուղել իւրում զսրինգ առ ափն  
գետոյ տեսեալ՝ ի ջուր զայտս իւր ուռուցեալ և  
տղեղացեալ իրան զփամփուշտ փքալից՝ ընկէց, և ա-  
սաց. “ Եւրի Բանդադին է ժողորուին երգոց գնեռ-  
այսլու ժաման : Եւ յիրաւի շարժէ տիկնաց մնծա-  
մնծս փշելով ուռուցանել զայտ իւրեանց և սիրու :

Հ. Հոմերոս կոչէ զսա Բանդին, իամ կապութունեան  
Աստուածուհի : Բայց դու կարես ասել ինձ թէ ընդ  
էր և Պիւղոտիս անուանի :

Պ. Պոլոց, Դաստիա, տայ ծագումն անուանդ. զի  
որպէս արձան մարեխսան՝ ի հրուանդանս, նոյնպէս  
և արձան նանեայ զետեղեալ լինէր՝ ի դարպաս  
քաղաքաց և ՚ի դրունս տանց, ցուցանելով թէ  
պարտ է զէն արտաքս՝ ի վար առնուլ, և չտալ անցս  
թշնամոյն՝ ի քաղաքս մեր : Այլ՝ ի ներքս՝ վարիլ  
զինու միներվայ. որ է՝ իմաստութեամբ, խոհեմութ,  
և օրինօք :

Հ. Արի մեկնեա ինձ զայլաբանական միտս :

Պ. Այլաբանօրէն առեալ Նանէ զիմաստութիւն

և զպարկեցտութիւն յայտ առնէ : . զի Նանէ ի  
գլխոյն Ծրամագրայ ծնաւ, այս է, ամենայն գիւտ,  
հանճար և իմաստութիւնյաստուծուստ ածանցին  
ի մեզ : Ք Նանէ զինի, և հոգի իմաստոց կազդու-  
րեալիմաստուք և առաքինուք անյաղթ է : Զի նա-  
խապարաստ լինի փորձանաց բաղտին, 'ի վտանգս  
անվեհեր, Ղ վիշտու տոկուն, և 'ի թշուառութիւնս  
վեհ : Զի Թուղեգին +ընի պապիեր Անդրեայ ՚ի դօն  
ասիան որդին Անդրեանց է անմաց և անհագ յայնմոնէ նոյն-  
պէս հսդի իմաստույն անշարժ կայ ընդունէմ ամենայն որդինցից  
բացին : Գ Նանէ կոյս է, կոյս են և Դստերք երգոց,  
վասն զի տեսուի այ է, և աչք տեառն սուրբ են ը  
Սաղմոսողին : Ծու որ և կռապաշտք անգամ հաւա-  
տան՝ անարատ աչօք զած տեսանել : Դ Տանրահա-  
յեաց է նանէ, զի այր իմաստուն արտաքին փառաց  
զհետ ոչ լինի, ոչ զեղոյ մարմոյ, և ոչ զարդու  
զգեստու . զի զիւր փառս նա ՚ի ներքս յինքեան կրէ :  
Զի երբ իմաստուի առաքինուն հաղորդի, արձակէ  
ճառագայթս փառաց պայծառ քան զարեւ : Թէ-  
պէտք ցնցուտի զգեստ ազանի, այլ լուիւն սկաբծա-  
նաց նը լուսաւորէ զամէ : Գեղազարդ է աւատառատուն  
ձորձովք նա՝ քան ծիրանի տառաօկօք : Աեհա-  
փառագոյն է եթէ յաղթիւս ընկեցեալ, և թէ ի գա-  
հոյս բազմասղ : Զօրաւոր ՚ի ծերութեն, և փառուն 'ի

մանկութեան իմաստութիւն է : Ե Նանէ եգիտ և 'ի  
գործ առ զման, և այսպէս Օրիորդք ազգիս մերոյ  
եթէ կամիցին սիրել զարկեշտութիւն, ուսցին  
զգործունութիւն : Զի բարեհանձնան է հայր ամենայն  
լորեաց : Ե Նանէ եգիտ զիւ և զաղէկատ, զորս պարտի  
ունիլ կին ժրագլուխ իբրև զէն 'ի ձեռու իւր և  
պաշտպանելնոքօք զիւր տունյերեսաց կարօտուեց  
և, կարեաց : Զի հինք 'ի հարսանիս կրէին զայսոսիկ  
առաջեաւ հարսին, և 'ի մահուն 'ի գերեզման ընկե-  
նուին, ցուցանելով զնա կին 'ի կեսնս տնարար : Է  
Թրէսիաս մերկ զնանէ տեսեալ կուրացաւ. այլ այս  
կուրութիւննմաս պարգև՝ քան թէ պատիժ համարի  
զի ընկալաւ զհոգի մարդարէութեան, և տեսաներ  
զծածկութիւն ապառնեաց : Յորուստ ուսանիմք,  
զի որ միանգամ մեկին տեսանէ զիմաստութիւն,  
կորուսանէ զայս մարմեղէնս, առ 'ի չհայելոյ յոր ինչ  
կենցաղոյս, զի հայի յոր ինչ յերկինս վեր, և խոկայ  
զայ անտեսէն 'ի մարմաւոր տեսանելեաց : Ը թու,  
որ 'ի գիշերե տեսանէ սրբեցաւ Նանեայ, և օրինակի  
իմաստնոց, որ 'ի բաց փարատելով 'ի մաաց զմրայլ  
մոլորուեց և տգիտուեց՝ պարզահայեաց լինին, այնինչ  
այլք կոյր զկուրայն դանդաշին : Ա Արձան Նանեայ  
Պալւարէն, նեցուկ ամրութեան քաշաքաց և թա-  
գաւորուեց տուեալ 'ի յերկնից, ակնարկէ աստանօք

թէ չիք տէրութիւն որ կայ, Ծափութ յիմաստուեց  
այ: Թերեկնից էջ այս արձան, Զի ամենայն գուրք+ բուրք+  
և ամենայն պարգևն+ հոգուրեալ+ ՚ի վէրսուսպ էն իջեալ առ ՚ի  
Հօրէն լուսա, ասէ Առաքեալն Յակոբոս:

Հ. Զիարդ նկարի Նանէ:

Պ. Կուսան վեհափառ: Խրոխտ և ծանրահայեաց,  
սաղաւարտ բուազարդ ՚ի գլուխ նը, զըահ ՚ի լանջս,  
նիզակյաջոյ իւրում և զվահան ՚ի ձախն:

Հ. Ու՞ր ուրեք պաշտիւր Աստուածուհիս:

Պ. ԱԵԳԻԱՎՈՍՍ, ՚ի Յունաստան, ՚ի Հոյս, և ՚ի  
Հռովմ, ուրանօր և հոյակապ տաճարանի կառուցան  
՚ի պատիւ նը: Պարթենոն մեհեան Աթենասսյ կայ  
տակաւին յԱթենացւոց քաղաքին առ ՚ի ցոյց  
ըերմեռանութութեան բնակչացն յերախտիս նը:

### ԳԼՈՒԽ ՏԵՍԱԵՐՈՐԴ:

Հ. Ո՞Վ էր Աստղիկ, կամ Ափրոդիտէ:

Պ. Չածուհի և մայր գեղեցիկ Սիրոյ, պաշտպա-  
նուհի Ընորհաց, և գժիսոյ նստելի վայելցութեանց:  
Յորժամ մարդիկ առ ոտն հարին զնորհութս երկ-  
նից, և զնա որդուովն Կրովսիւ հանդերձ ընկեցին ՚ի  
ծով սա ՚ի փրփրոյ անտի ծնեալ եղաւ ՚ի խեցե-

զէն տապանակի երթ զմարդարիտ ՚ի սատավի. և  
բերեալ Ծեռօք Զեփեւոց ՚ի կիալրոս կղզի՝ յանձ-  
նեցաւ դայեկութեան ժամուց և Եղանակաց դը-  
տերցն Սրամազդայ և Թեմեայ. և մնեալ ՚ի նոցանէ-  
ցաիս հասունութեանն իւրոյ՝ հանաւ տարաւ  
յերկինս, տարփացեալ ՚ի դից համերէն, ամուսնացաւ  
՚ի վախճանի ընդ Հեփեստի դժնդակասեռիւ դից:

Հ. Կամ՞ սոկա և այլ անուանք :

Պ. Այսու, ոս Ավրողիղէ, որ է Փրկրոջին կամ Փր-  
կրոջութեալ լսի. զի վրփրէ մոլեգնուք զսիրովս իւր:  
Ալինուս, Բեր. զի առ ամենայն բերի: Հիտերայ  
Ամիկա, Զայդ, զի զսիրելիս զուգէ ընդ միմեանս:  
Արմետա, Վինետ, զի կանայք Սպարտացւոց զՄե-  
սինէացիս զալաշարիչս քաղաքին հալածական ա-  
րարեալ անծան յարանցն իւրեանց՝ առիթ ետուն  
նոցա Աստղկան զինելոյ կառուցանել զմէչն: Աս-  
տարտ, Ապատուրէա, Պապուզ. զի կայ պատրոջ քան  
զսէր, որ շորթէ զհաճոյս աշաց իբրև զվարդ վա-  
ռեալ ՚ի գեղեցկութիւն գունոց, և իսոցէ զսիրա  
փշովք: Կի-պէիս ՚ի կիալրոս կղզւոյն: Կիլերիս, ա-  
նուն ծովուն՝ յորմէ ծնաւ: Երիկինս, յերիկորան  
լեռնէն ՚ի Սիկիլիա՝ Ծաղ, կամ ծաղասէր, որ և  
Փիլոսիդէս, զի գեղ և սէր ինդուեց են արարող:  
Հօրդէնսիս, Արինետն. Իդալիա, կամ Ակիդալեան՝

յեղալոս լեռնէ : Մաւինա, Ծառնչին : Մեղմնին  
խուրացին, զի կոյր Սէր՝ ի խաւարի շրջի միշտ : Ակով  
տէս, Գիշըրունտանւ : Միգոնիտիս, Ըստուր, և և  
Զո՞րա, Վարդավառ, Պափեան, և այլն :

Հ. Զին՞չ են գործք Աստղկան :

Պ. Ենամօթութիւն և պղծութիւն միանգամայն :  
Զի մը առանց պատկառանաց սրտասել կարէ  
զանցո Նեկտիմինայ, որ յառագաստէ հօրն փոխեցաւ,  
՚ի բու, և առ չարաշար ամօթոյն չգայ ՚ի լըստ տուն-  
ցան, այլ ինդրէ զխաւար ՚ի բնակութի իւր : Կամ  
ով իւէ բանալ զգարշանս միւռա ընդ հօր, որով  
և անզգայացեալ փոխեցաւ ՚ի ծառ Զմռսի թռ-  
քել հանապազ զարտասուս զշման :

Հ. Զին՞չ արար Աստղիկ Պիգմաղիոնի :

Պ. Փիգմաղիոն սիրելով զվիճակ ամուբեաց՝ ան-  
ամուսին կաց, այլ յետոյ դրօշեալ զարձան Աստղ-  
կան ՚ի փղոսկրէ՝ այնքան զմայլեցաւ նմին, մինչ  
ինդրել ՚ի դիցուհւոյն կեանս տալ նմա : Դ կատա-  
րել Աստղկայ զայս յարձանէն հոգեորելոյ Փիգմա-  
ղիոն զՊափոս ծնաւ :

Հ. Զին՞չ չնորհ Աստղկայ Պիրամայ և Թեսալեայ

Պ. Ե՛յս : Պիրամոս և Թեսալէ սիրահարք, ծնան  
մնան, և զարդացան ՚ի բաբելոն, անբաժ յիրերաց .  
այլ խռովութեամբ իւիք ծագելով ՚ի մէջ երկուց

գերդաստանացն՝ արգելեալ՝ ի հաղորդակցութենէ  
իրերաց՝ ժամեղին ելանել՝ ի մայրի և անդ վայելի  
զաէր։ Նախ թէսպէ երթեալ կայ առ աղբեր՝ գալ-  
տեան Պիրամու։ Առիւծ դիապաւ անդ հանդիպի,  
յորմէ ՚ի խուսել թեսպեայ անկանի քօղն։ Զարիւ  
կենդանւոյ զայն դիտելով առիւծուն՝ պատա-  
պատառ ծուատէ։ Գայ ապա պիրամու, և սե-  
սեալ զքօլն՝ զիւր սիրուհին կարծէ դիպեալ գալա-  
նին, անձնամահ լինի։ Թեսպէ գայ առ նա, գիրկ  
արկանէ վիրաւորեալ սիրահարին, և հանեալ զուրն  
՚ի սրաէ նորա՝ միէյիւր սիրտ և մեռանի։ Թթենին,  
որ յառաջ սպիտակ սլտուղո բերէր՝ ամաշելով ՚ի  
մահուանէն Պիրամայ՝ կարմրապտուղ լինի, այ  
յետոյ և զթեսպեայն տեսեալ մահ սեանայ սգով։

Հ. Զինչ և Ատալանտայ և Հիպակոմենեայ։

Պ. Ատալանտա դուստր Սքէնիոսի արքայի ով-  
որդ գեղեցիկ և սրնթաց յոյժ, լուեալ թէ չամու-  
նուի մահ բերէր ինքեան թաքոյց զինքն յանտառէ  
անտես յիւրոց տարփածուաց։ Սա յետ զբազում  
արհամարհեց և կորուսանելոյ. տարփացեալ ՚  
Հիպակոմենիզեայ՝ դաշն եղին արշաւել. զի ելէ յու-  
թեացէն ինչ ասէ օրիորդն, ինոցայց ուշ։ Առ այս Աստ-  
զիկ տուեալ էր սլատանւոյն զեզիս ուսկի ինձոր  
յԵրեկորնական պարտիզէն, զորս և նա յարշաւան

անդ մի առ մի սահեցոյց 'ի վայր, որոց 'ի քաղելադշեան՝ պահ ասայր պատանւոյն յառաջել և յաղթել ինքեան։ Եւ այսպէս եկին նոքա 'ի մեհեան ինչ, ուր և վասն սըբապղծութեանցն, փոխեցան յաւիւծունս։

Հ. Պարիս և Հեղինէ շնորհապարտ գտան սմա։

Պ. Այս, \* և կործանումն Եղիոնի, եթէ հաճիս. վասն զի՞ այնինչ 'ի հանդիսի ուրեմբ համահաւաքեալ էին Դիք, ԿԸ.Գ, շաստուածուհին Անմարանութեան արել 'ի մէջ բազմականին զինձոր ուկի, մակագրեալ գեղեցի-գուննին։ Իւրաքանչիւր ածյինքն կորզել ջանայր զայն, յետոյ դադարեալ նոցաթողին զլէ՛ցն Հերայ. Աթենասայ և Աստղկան։ Երեքին սոքա լնարեցին զՊարիս զորդի Պրիամու արքային Եղիոնացւոց դաստաւոր ինդրոյս։ Հերահարստութիւն խոստացաւ նմա, Աթենաս իմաստութիւն, իսկ Աստղիկ զզեղեցիկն 'ի կանայս՝ կաշոի մասամբ։

Հ. Զովարժան դատեցաւ նա ինձորոյ այնմիկ։

Պ. Զաստղիկ, որ 'ի տըիտուր այսր երախտեաց ձեռն ետ նմա յափշտակել զՀեղինէ զդուստը մնեղաւսայ արքայի Սպարտացւոց. որ եղև առիթ տասնամսն պատերազմի և կործանման Տրոյիոյ։

Հ. Ո. Է. էին ընկերանի Աստղկան.

Հ. ՀՏՄԵՆ կամ ԵՐԴ որդի Աստղկան ը ոմանց  
՚ի բաքոսէ, ը ոմանց՝ յՆապողոնէ, և ը ոմանց յԵր-  
բեսէ, շատուած հարսանեաց և պաշտպան օրիոր-  
դաց : Այնքան էական իմն համարէր ապագայ եր-  
ջանկութեան ներկայութի սորա ՚ի հանդիսի հարսա-  
նեաց՝ մինչ աղաղակաւ զսա կարդալ յօգնութիւն :

Հ. Որս՞էս նկարիւր Հիմէն :

Պ. Պատանի կայտառ պսակ մարեմայ ՚ի դուխ  
և շարանս վարդից զուլամբ իւրով, քը քմազգեաց.  
՚ի միում ձեռին զջահ բոցավառ, գուցէ ՚ի բորբել  
զսէր, և ՚ի միւսումն հանգոյց ՚ի կապել զսիրտ ընդ  
սիրտ, կամ քօլ հրագոյն ՚ի նշան ամօթխածուն  
որ ծիրափայլ ներկէ զերեսս կուսից :

Հ. Զի՞նչ յայտ առնեն նշանքս :

Պ. Նորահաս տիօք Հիմնայ ցուցանի թէ այր  
՚ի զօրութեան հասակին ամումնանալ սլարտի:  
Վարդեայ պսակաւ՝ թէ բանաւոր ուրախութիւն  
ընանիլ պիտի ՚ի սիրտս ամումնացելոց : Զահիւքն  
թէ անկեղծ սէր միշտ վառիլ պիտի ՚ի մէջ առ  
և կնոջ բայց ու՞ր :

Հ. Ո՞գ էր միւս ընկերակից Աստղկան :

Պ. Սէր, կամ կուպիդոն, զոր Պղատոն որդի  
Պենեայ դից աղքատութեան, և Պորոսի որդուն  
Հանճարոյ և Առատութետն ասէ : Հիգիոդոս որդի

երկնից և ԱՀԻՆ, Սոփոն՝ որդի Աստղկան և Երկնից։  
Աղկէոս՝ որդի Լիտեայ և Զեվիւռոյ, Սիմոնիդէս՝  
Մարեխան և Աստղկան, և Աղկմէոն՝ Զեվիւռոյ և  
Փղորայ. որքան զանազան և իցեն կարծիք հնոց ըգ-  
ծնիդենէ սորա . տակաւին միասնանան յայսմ, զի  
Սէր միշտ գեղոյ է ընկեր. իբրև որդի կամ ծառայ նր։

Հ. Քերթողք երկու սէր չասացին։

Պ. Արդարն, զմին որդի Աստղկան և Արամազ-  
դայ մանկիկ կայտառ և ուշիմ, և սա է որ ծնա-  
նի 'ի մեզ զգացութիւնս երկնայինս, և անկեղծ-  
համակրութիւն առ աստուած և առ ընկերս մեր։  
Իսկ զմիւսն որդի Դժոխոց և Գիշերոյ անպարկեշտ  
և ցոփ տղայ, ընկեր Արքեցութեան, Շուայտուեան, Նախանձու, Ատե-  
լուն և այլ այս օրինակ աղիտից։ Ցորոց մին Երս  
և մի Անտերոս կոչին։

Հ. Զիա՞րդ նկարին սոքա։

Պ. Մանուկ հասակաւ. ցուցեալ թէ սէր չունի  
ընտրութիւն։ Մերկ՝ զի այր սիրահար մերկանայ

\* \* Արեգան դնէ զոեր սրդի Անյիւլունուն-Անոն, Հայը  
ծամանուի, Խնուն ասպա-ծոյ, և գեղշոյագոյն և երիցոնցոյն  
եի, բաւրեցունց։ Ու զս-գետը Շնոր վէին իսունանուն-Անոն  
յանիւլունուն յու-լոյ անորի ծնոս զիւզուն-Եիւն գիւղշըրիւն։  
Նիւրի մոնուի աշխայք և իսպառ, Բորբետը 'ի վէրոյ սուն-  
շնէն ինուց իւրաց պատմանունին նորուծին։

տարբիածուի Եւրում զխորհուրդս իւր : Կոյր՝ զի՞ն  
տեսանէ սէր զպակասութիւն սիրելը ոյ իւրոյ : Թէ,  
աւոր, զի չի որ քսն զսէր արագ արագ թռանի,  
Զի որ այսօր սիրէ զքեզ, գուցէ ատիցէ ՚ի վաղուին.  
Ամոն որդի Դաւթի սիրեաց և ատեաց զթա-  
մար կարձագոյն ևս միջոցաւ : Զինի կապարձիւք,  
զի սէր ՚ի հեռուստ նետահար լինի. և ջահ՝ ՚ի ձե-  
ռին հրդեհէ օզկիրս և խորովէ զսիրտս :

Հ. Ոյք էին և երեքին քոյր ԸՆՈՐՀՔ :

Պ. ԸՆՈՐՀՔ, կամ Խարիթեանք դստերք Արա-  
մազդայ և Եւրինսմեայ, կամ Բաքոսի և Աստղկան,  
յորոց Երկցագոյնն Ագլայա կոչի, վասն պայծառով  
գիմացն, և այսպէս՝ պարտի շնորհ պայծառով  
դիմաց և անձիշտ ձեռօք տրիլ : Միջինն՝ Թալիայ,  
Անդաման, և ըստ այսմ չէ պարտ շնորհաց մեռանի  
մոռացուք, այլ միշտ արծարծանիլ յուշում ընկա-  
լուին : Իսկ կրսերն՝ Եւկրիսինէ. այն է Զարդի,  
զի պարտ է շնորհաց զուարթ լինիլ թէ ՚ի տանէ  
թէ յառնուլ :

Հ. Որպէս նկարէին քոյր ԸՆՈՐՀՔ :

Պ. Կամ խապառ մերկ, և կամ արկեալ զանձամի  
շլաղնըբաթել. ձեռս ՚ի ձեռս ագուցեալ Մի զերե-  
յետս թեքեալ, և երկու՝ յանդիմպնահեայցք, յու-  
ցանելով թէ միոյ շնորհի երկու՝ շնորհակալուլ:

պիտին : Մերկ էին շնորհք, և այսպէս պարտ է շնորհ անխարդախութ և սրբութեամբ սրտի լինիլ : Նորատիք էին՝ և այսպէս պարտի շնորհ միշտ նոր ինորոյ պատկերանալ ուշոյ ընդունողին : Կոյս էին և այսպէս պարտ ՚ի վերայ կայ ամենեցուն շնորհ աստուածահաճոյ առնել կարօտելոց ՚ի փառս այ, և ոչ շռաջլանալ յանպարկեցտ ոխուրս շանց ՚ի փառս մարմնոյ և սատանայի : Թաւակցեալ էին, և և այսպէս Պարտէ χարιս չաօւն տիկու, չուրկոց ըն- նարկո նկատիլ :

### Հ. Ընկերէք՝ Սատղկան և Սդոնիս :

Պ. Այս, և յոյժ սիրելի էր նմա այս Սդոնիս որդին Կինարոսի արքային Կիսլոսի և Միւռայ . բայց իբրև յաւուը միում վիրաւորեալ սորա զվա- րազ, հարաւ մեռաւ ՚ի նմանէ, Սատղիկ սուգ մօծ առեալ ՚ի վերայ՝ փոխադրեաց զարիւն նորա ՚ի Հաշմածողին : Եւ իբրև զնայր շտապաւ դիցուհին գթոտ՝ յօգնութիւն սորա՝ էհերձ փղովք զգողո- րական գարշապարս իւր և արիւն հոսեալ ՚ի վի- րաց նորա ծաւալեաց յերես Աւորոն, և ներկեաց զնա ՚ի գոյն ծիրանի, զի յառաջ քամն զայս սպիտակ էր վարդ :

### Հ. Կարե՞ս մեկնել ինձ զառասպել Դիցուհւոյս :

Պ. Այս : « Ընորհք, Սէր, և Սդոնիս ընկերին

սմբին, 'ի ցոյց հակամիտուե մարդկամն առ անառակ  
հեշտուիս : Բ.սի աստուածուի գեղեցկուե, և ընդ  
էր ոչ ամննազօր, որ նստեալ յաթոռ մարմնեղին  
հնազանդէ զհոգի . և անուշակ հրապուրանօք գո.  
զացեալ զխանդաղանան գերէ իւրն ասպա բովանդակ  
զմարդ : Կիթերեանք պաշտէին զԱստղիկ զինեալ  
այլ զինչ, գեղ կարօտի՞ զինուց. ոչ բնիւի ետ կա.  
նանց զգեղ փիխանակ զինուց, և ո՞ կարէ կալիմա.  
նալի հարուածոց նորա : Գ. Բազմի 'ի կառա, որպէս  
թէ յաղթանակել կամելով, որոց Սէր քան թէ բըռ.  
նուի յաղթեաց : Դարանի որսոց իւրոց 'ի ծաղկաւէս  
դարաստանս, գերէ զնոսա, այլ ոչ զօրուէ հրացա.  
նաց, այլ հրով սիրոյ, որով բորբոքէ զաշս տար.  
փածուաց : Խոցէ անարիւն, և իւրե դարձեալ բժշկէ  
զվէրս, զի՞նչ զարմանք են ուրեմն թէ թշնամիք առ  
ինքն՝ քան թէ յիւրմէն, վախիցեն : Դ. Թագ է 'ի  
գլուխնի. զի միշտ է յաղթող : 'Ի լոռուեց գեզոյ կայ.  
ծակունք հատանին 'ի բաց, և 'ի դէմս նը ճառա.  
գայթին վայլատակմունք : Գրաւէ զկուրծս, և  
փոթորկէ զսիրտս : Խօսի 'ի լոռուե սէր, և ովէ որ շան.  
ան նմա : Եւգոստոս չզիջաւ 'ի տեսուի կղէոպատ.  
բայ, զի մի յաղթն աշխարհի, յաղթեսցի 'ի կնոքէ:  
ե. Կըէ նա զհայելի, զի պայծառուի ապակւոյն յու.  
արասցէ իւր զմնոտիս վաղանցուէ գեղոյն, տանիւ

բոլորս ծաղկանց, զի ցուցցէ թէ իբրև ծաղիկ ամառայնի է գեղ, որ խամրի խորշակաւ հողմոց, բեկանի ձաղոխակ պատահարօք և վաղքաջ ցնդեալ չորանայ : Պ. 'Ի ծովէ ծնաւ, ուստի և ծովածուփ ալէկոծէ զսիրողս իւր : Եւ զինչ այլ ևս ունիցիմասել, քան թէ՝ զի ։ Amare esse amatori amarum, Սիրեն է ընդէլլուսոյն :

Դժուարին է լըսիրել,  
Դժուարին նու և սիրել .  
Բայց յոյժ դժուար ժոն զոմէն,  
Չժուանգիել զոր սիրեն :



### ԳԼՈՒԽ ՄԵՏԸԾՆՆ :

Հ. Ո՞Վէր Հեփեստէս, կամ Առւլիան :

Պ. Աստուած ոմն գարշատեսիլ և դժնեայ որդի Արամազդայ և Հերայ, գտակ հրոյ, և հայր դարբնաց շանթագործ Արամազդայ :

Հ. Եկա՞ց յերկինս Հեփեստէս :

Պ. Ընդ երկայն ժամանակս, բայց յետոյ ձեռներէց գտեալ յազատութի մօր իւրոյ Հերայ զոր կախեացն

Արամազդ ընդ մեջ երկնից և երկրի շարժեաց՝ ի բարկութիւն զհայր իւր, և աքսորեցաւ յերկնից :

Հ. Զինչ, կամ որպէս եղեն ելք իջից նորա :

Պ. Զինն օր և զինն գիշեր շարունակեալ ի գա. հավէժս, 'ի վերջը այնքան ուժգին զգետնեցաւ ի լիմոս կզզի, մինչխեղ նա զմի ի բարձից իւրոց և կա. զացաւ :

Հ. Ո՞րպէս ընկալան զնա բնակիչք կղզւոյն :

Պ. Կարի մարդասիրութեամբ և հիւ ըընկալուք. Իսկ Հեփեստեայ կացեալ առ նոսա, ուսոյց նոցա զզօրութիւն կրակի, և պէտս հրահալաց :

Հ. Ընդ ումամունացաւ Հեփեստէս :

Պ. Զարմաննամ, այս տգեղ դարբին ամունացաւ ասեն ը Աստղկան դիցուհւոյ գեղեցկուե, այլ որպէս բնական իմն է այսպիսի դիպաց՝ այս կին գեղեցիկ արհամարհեալ զայն գէշ այր, պոռնկեցաւ նախ ը Արամազդայ, ը Արէսի, ը Բաքոսի, ը Պոսիֆոնի, ը Անքիսեայ, և ընդ այլոց բազմաց : Յորոց և ծնաւ որդիս շարուե : Ահա քեզ սիրունութեան բերք :

Հ. Կարե՞ս յիշելինձ զոմանս 'ի գործոց սորա :

Պ. Այո. իբրև եքաց Արև զիսառնակութիւն կնոջ սորս ը Մարեսան, արար սա ցանց անդսոմանդեայ և վարմեալ զչարագործմն եհանյատեան դիցն համօրէն, և խայտառակեաց զնոսա :

Հ. Զի՞նը այլ երևելիս գործեաց սա:

Պ. Չուլեաց յոսկւոյ արձանս այնքանն զարմանալի ճարտարութ և արուեստիւ, մինչ զի իբրև զգայուն ուր և գնայրն զհետ լինէին ինքեան: Արարասեն սա և զկինն առաջին, որ յետոյ Պանդորա անուանեցաւ: Վասնզի ետուննմա աստուածք ուրցն զկատաթելուիս, Աթենաս՝ զիմաստուի. Ապոլոն զերաժշտուի, Հերմէս զՃարտարասուի, Աստղիկ զգեղեցկուի, և Արամազդ զտուփն ոսկի շաւառ, և հրամայեաց զի մի' ոք իշխեցէ բանալ բաց յառնէ իւրմէ:

Հ. Զի՞նը պատմին զՊանդորայ:

